ՍԱՍՆԱՅ ՏՈՒՆ

ԵՕԹԸ ՃԻՒՂ.

(Վանայ գաւառաբարբառով*)

Տանէ օղորմին, տանէ օղորմին պարոն Տէր Ներսէսին, Օրշնեալ է Աստուած, էո խնամին է շատ։

Տանէ ողորմին Հօթ ճօղծամ Գիւղարին, Օշնեալ է Աստուած և այլն։

» » Սանդուխ Խաթունին » »

» » Սանասարին » »

» » Պաղդասարին » »

» » Խանդութ Խաթիւնին » »

» » Ճոչ Մէլքոնին » »

» » Ծէնով Օվանին » »

» » Տռալ Վէրգէնին » »

» » Աստղիկ Թակաւորին » »

» » Ճոչ Մհէրին » »

» » Թլօլ Տաւիթին » »

» » Պստիկ Մհէրին » ».

Կէլնի, կէլնի մէկ թակաւորըմ որ կռապաշտ էր։ Էսա թակաւոր կը տեսնա որ չի կանա գլօխ էլնի խեղ պարոն Տէր Ներ-

---

*) ա. նոտրատառը կարդալու է էա մէկ վանկով։ գ. նոտրատառը կարդալու է գյ կամ աւելի կյ։ ո նոտրատառը կարդալու է ևո մէկ վանկով։ f նոտրատառը կարդալու է քյ։ օ նոտրատառը կարդալու է էօ մէկ վանկով։

բ. տառը վանայ բարբառի մէջ պ դրի հնչում ունի, երբեմն էլ՝ վ դրի։ դ. տառը վանայ բարբառի մէջ տ դրի հնչում ունի։ հ. տառը դործածական չէ, դրա տեղ հնչւում է խ։ յ տառը կրճատւում է շատ բառերի և անուններուն սկիզբը. չ տառը վանայ բարբառի մէջ ճ դրի հնչում ունի։ պ տառը բառերու վերջ ընկած ժամանակ ք տառի պէս է հնչւում։ ո տառը վ և ղ բառերից առաջ օ հնչելու է։ ձ տառը ծ դրի հնչում ունի։

սէսին, միտք կը դնի ինոր Սանդուխ անունով աղչիկն առնել։ Իսոր խամաբ մարդ կ'օրօխկի Տէր Ներսէսին, կասի Ֆո աղչիկ տու ծիկ, ես իմ երկրի կէս կու տամ ֆե։ Տէր Ներսէս պատասխանեց թէ էդ բան ինչպէս կէլնի. Ֆանի որ ես Քրիստոնեայ եմ, տիու կուսպաշտ։ Իսկի Քրիստոնի աղչիկ կուսպաշտին կուտան։

Թակաւորն ասաց, ինչի չէ, Ֆանի որ ես պատրաստ եմ իմ սարի դիմաց ժամըմ շինել, ինոր մէջն էլ տէրտէրըմ դնել Ֆո աղչկան խամար։

Թակաւորու ասած որչափ որ ընդունեց Տէր Ներսէս, աման ասաց պէտք է որ իմ աղչկան կամքն էլ առնիմ։ Եփ աղչկան այտնեց ես պան, աղչիկն ասաց ինոր, Ֆո կամքն ինչա որ կուզի, էն արա, աման կուզեմ կիտնալ թէ ես Քրիստոնեայ պիտի ծնամ թէ դաեռնամ կուսպաշտ։

Ատէրն ասաց, Թակաւոր խօսք է տուի որ ուր սարի դիմաց ժամըմ շինի, ինոր մէջն էլ տէրտէրըմ դնի Ֆե խամար որ դիու Ֆո ուղածի պէս պաշտես Ֆո ասպած, ուր երկրի կէսն էլ մե պիտի տայ։

Իսոր վէրէն աղջիկն ընդունեց, ասաց. «Մեծ է ղօրութիւն Քրիստոսի», ու էն Թակաւորու օրօխկած մարդերաց խեդ կնաց։

Աղչիկ եփ Թակաւորու մօտ խասաւ, Թակաւոր շատ ուրախացաւ, ճօթն օր, ճօթն գիշեր խարանիս արաց, պասյուաւ էն ախչկան խետ, աման երեք տարի ինոր մօտ չկնաց. մէնակ Թէ ուր սարի էրդսից կը զրիւցէր խետ։

Աստծու խրամանեով Սանդուխ գիշերըմ էրազ կը տեսնայ, էն էրազի մէջ խալիւոր մարդը կէրէնայ ինոր, կասի էսա էլաւ երեք տարի որ Թակաւորու խետ պասյուեր ես, աման իսկի անկողին չես կնացի։ Իսոր խամար պէտք է որ Թակաւորուց խընդրես ու ասես որ վաղ կատաղա անի, իսկի ոտգեղէն ասած մարդ տնից դիւս չէլնի՝ որ տիու քո մարդերով էլնես երթաս էսա դիմացի սար Ֆռաս։ Եփ կերթաս, կիտցած էլնես որ էնտեղ անմահական աղբիւրըմ կայ, էն տեղ խասնելիւդ պէս կը նստես էն աղբրի գլօխ, կը լուացուես. ինոր ճրից կը խմես. քո ծիուն էլ կը խմըցուցես. էնտեղ կուտես. կը խմես Ֆո էֆֆ կանես, ապա կը դաեռնաս եդ, դաեռնալիւն պէս էն կիշեր կերթաս մօտ Թակաւոր, Ֆո սրդի մուրազին կը խասնես։

Սանդուխ էն առաւտան արթննալիւն պէս կնաց մօտ Թակաւոր, ուր խնդիրքն արաց։ Թակաւոր շատ սիրով ընդունեց ինոր խնդիրք, դալալ կանչել իտուր էն օր ու կատաղա արաց որ ոտգեղէն ասած մարդ ուր տնից դիւս չէլնի, ինչի որ Թակաւորու յարանն էն օր պտտելու պիտի ելնի։

Էն օր Սանդուխ ուր մարդերով ու խալայիղնիերով մէյտեղ դիւս էլաւ սարիյ, կնաց ֆռալու։ Շատ կնաց, ֆիչ կնաց, խասաւ Մարութայ պանցը սարի մօտ, նստաւ էն աղբրի մ՚ոտ, լուացուաւ, համաւ ինոր ճրիյ, ուր ծիուն էլ խմըցուց, ինք նստաւ կերաւ ու համաւ. ծին էլ չայիրի մէջ թօղեց արածալու։

Ուր քէֆ աղէկըմ խասուցնելուց եդ, նորէն ուր մարդերով ինկաւ ճանապախ ետ դառնալու համար։

Կէս ճամպախ խասաւ թէ չէ, մէկ էլ անկարծ էն էրաղի մէջ էրէւցած խալիվոր դիմացն էլաւ ու ասաց. Գիտցած էլնիս որ քեղնից էլած տղէն էսա տեղ ժամըմ պիտի շինի, էն ժամու ա-նունն էլ պիտի դնի Մարութայ պանցը Ասպածածին։ Էս խօսքն ասաց թէ չասաց, շուռըմ ճոչ խաչաքարըմ բերից ու էն տեղ տըն-կից ուր ասածին նշանակ, մէկ էլ շուռըմ անհետ էլաւ։

Սանդուխ էսա պանի վէրէն շատ ուրախացաւ ու ճանապախ ինկաւ չուր սարէն մէկ։ Եվ խասաւ, էն կիշեր թակաւորու ժօտ կնաց։ Քաշից ինն ամիս թէ չէ Աստուածութեն ջուխտըմ լաճ իդուր Սանդուխին։ Ֆիչ հաք Սանդուխի ծին էլ ծնաւ, խօրօտ ֆուռակըմ խլե։

Իսոր խամար թակաւորու ճոչան ֆ[1]) սարէն[2]) ժողվուան կերան, խման, շատ ուրախութիւն արին, աման որչափ որ աշխատան, չկարցան էն տղէներից անուն դնել։ Մէկ էլ անկարծ էն խալիւոր մարդ էրէւաց ու ասաց՝ Ես պիտի դնեմ էդա տղէյներից անուն, մէկու անուն Սանասար, էմէկէլին էլ Պաղդասար պիտի էլնի։ Ծիու ֆուռակի անունն էլ իդիր քուռկու ճալալի։

Աստուած օխնի Սանասարն ու Պաղդասար ինան քուռկոս ճալալին։

Սանդուխն ինան ուր կսրախ էն անմախական տղերի ճիւր խամած էլնելու խամար, Սանասարն ու Պաղդասար Աստծու խրա-մանքով էն տեսակ պէտ ու կլաւն ին որ մարդ կասէր թէ իրեք տարեկան տղայ են։ Քուռկու ճէլէլին էլ զաթի խօսքով չէր պատ-մուի, էն տեսակ պէտ թակ էր ու խրեղէն։

Քաշից երեք տարի, չէաշեց. Սանասարն ու Պաղդասար պատ կտրիճ ջիղներ դառցան։ Էն ժամանակ Սանդուխ թակաւորու ժօտ կնաց, խնդրեց ինորմից որ խրաման տայ ուր խօր տուն դառց էրթալու, երկու ամսուց վերչ նորէն ետ դառնալու խա-մար։

Թակաւորն ընդունեց Սանդուխի խնդիրն ու փոխանակ էր-կու ամսուան, չորս ամիս ճնալու խրամանն արաց։

---

[1]) Պալատականներ. [2]) պալատ։

Սանդուխ մէկէլ օր շուտըմ ճանապախ ինկաւ ուր մարդիրով մէյտեղ, դէխ ուր խօր տուն։ Եփ խասաւ Մարութայ սար, անկարծ սաստիկ անձրևըմ պռնեց, ինոր խամար կնաց մտաւ ճոչ պալիմ տակ։ Տեսաւ որ օլուտ չունի, գնաց ճոչ խարըմ իպե ու խարի կուշտն իդիր, ապա ասաց ուր տղէյներուց Սանասարին ու Գաղդասարին, մատաղ ձեր արիւնն, դէ՞ կնացէք մէյմէկ խար էլ դիւք պկրէք որ մէմէկու վերէն դնենք ու մանենք ինոնց տակ ուաւ կլինէ, չուր անձրև կտրի։ Սանասար ու Գաղդասարն էլ կնացին մէյմէկ խար պիրին ու վէր մէմէկու դրին էօլկէ շինեցին, մուան տակ չուր անձրև կտրաւ։

Էն ժամանակ նորէն էրազի մէջ երևցած մարդ անկարծ էն տեղն էրէւաց ու ասաց, ինչ կանէք։ Սանդուխն ասաց՝ Աստծու շնորխով տուն մեմ շինե իմ տղէյներով մէյտեղ, իրիկի դի, կը խաւնեմ մեր տան։

Ալիւորն էն տան պիւղր քիչըմ պտտեց ու էկաւ ասաց. Ասպած օխնի ձեր տուն, էս տունն էլաւ Սասնայ խաղաք, ինոր խամար Սանդուխ մարդ օրօխկից, ուր խէր պարոն Տէր Ներսէս ուր մօտ կանչեց։ Էնն էկաւ, շատ ուրախ էլաւ էն տան վերէն, նստաւ ինոնց խեդ կէրան, խման, ուրախութէն արին, վերջ էն տան անուն Սասնոյ խաղաք դրին, սարէ մ'էլ շինեցին էն տեղ։

Էն ժամանակ Սանդուխն ասաց ուր խօր. Մենք մեր մարմնաւոր տուն շինեցինք, պէտք չի՞ որ մեր խոգաւոր տունն էլ շինենք։

Իսոր վերէն խրաման խանին ու Սասնայ ժողովուրդ յրմէնն էլ էն տեղ ժողովուան, ու էն խալիւորու նշանով դրած խաչխարի տեղ ժամըմ շինեցին, մէկ օրուան մէջ թախիւստեցին պըրծան։ Մէկէլ օրն էլ օծեցին ու. պատարագ արին, ժամու անունն էլ դրին Մարութայ պանցր Ասպածածին։ Էն ժամտունն շինելուց պռծան թէ չէ, մէկ էլ խապար պերին Սանդուխին՝ թէ Ֆո թագաւոր մեռաւ։

Էս խօսք որ լսան՝ սւելի ուրախացան, նորէն նստան, կէրան, խման, շատ ուրախութէն արին, Սանասարն էլ ուր խօր տեղ թագաւոր դրին, էս կերպով էն թակաւորու յրմէն երկիրներ Սանասարի ձեռն ինկան։ Ըստեղց խաոսուն օր վերչ էլ՝ պարոն Տէր Ներսէս վախճանաւ, ու տարան թաղեցին էն ժամտան մէջ։

Ալաթայ խաղխի մէջ Ջանփոլադ անունով մարդըմ կէր, որ դէւերաց թագաւորն էր։ Էսա թակաւոր եր կուռի կէրթէր, էրկթէ խալաւ կը խայնէր, իսոր խամար սուր թուր չէր պանի ինոր վէրէն։ Էսա թակաւոր իսկի մէկ տեղէ էլ վախ չունէր, ինոր վախ մէնակ Սասնայ դնէն էր, էն տան կորիճներ մէնակ կանին զինքն սպանի։

Աւուր մէկ Սանասարն ու Պաղդասար խէճան ուրենց քամիէ ձիեր, մէկ աչք խփուցի մէջ քառան սարեր աւ-անելու համար։ Էնտեղ մէկ խատ վէրու ոչխարըմ էրէւաց թէ չէ, շուտըմ հաշեցին էրկու ախպէրներ ուրենց նետուանեղներ ու զարկին էն ոչխարին. նետեր դէպան ինոր ոտքերաց, աման ոչխար փախաւ նորէն։ Երկու ախպէրներ շատըմ էն ոչխրի տանն ինկան ու ինոր էրնի նշանով կնացին։

Զանփոլադ թակաւոր ամէն ճանպխա պէրան մարդ էր դրի, որ յըմէն էրթացողից գացողից խապար առնեն Սասնայ կտրճնեբաց ելմուդի համար։

Սանասար ու Պաղդասար շատ կնացին, էիչ կնացին, իրեէ օրից վերջ խասան մէկ անվէրվէրի տեղըմ, առանց էն ոչխար տեսնելու. էն տեղ ինկան էար էռէյղեկաց մէջ, ըսկուն տեղըմ որ խաւէն ուր թիւով, օձն ուր պորտով չէր կանի էրթայ։ Մէկ էլ տեսան որ էն տարալու ոչխար կնացեր էր ինկեր էր ճոչ պալի մ'տակ։ Տէսան որ դէւերաց մէկն էլ էն ոչխար քրթելու վէրէն էր, որ պատրաստէր եփելու համար։ Էն դէւը Զանփոլադի կէշուշն էր, որ էն տեղ կը մնէր ընցնող դառցողներ աչքէ ընցուցելու համար։

Էն տէւը եր տէսաւ Սանասարին ու Պաղդասարին՝ շատ կուրախանայ ու կասի, դիւք բարօվ էկաէ, խաղար բարօվ էյ խողաձիններ. ըսկուն կիէրէւայ որ Աստուածուքեն ձիկ համար օրօխկեց ձե։

Սանասարն ասաց դէ էլի մէյտան խենք, տեսնանք թէ Աստուածուքեն որս որուն կանի՝ որուն կամէք կանի։

Էս խոսքի վէրէն դէւն էլաւ մէյդան ու ասաց. կդրիչներ ասէք խեմ. միղնից որ մէկ առջին տիր զանելու ի։

Սանասարն ասաց՝ դու ինչէս որ կուզես. թող ըսկուն էլնի։

Տէւն ասաց՝ ես ամէն մէկուդ մէյմէկ թօփուզ պիտի զանեմ. էն ժամանակ տէսնանք թէ Աստուած ձիկ կուդայ թէ ձե։

Էսա խոսքից վերչ մէկ տահաթի չափ զադացաւ դէւ. ուր ձեռաց թօփուզն անդուլկեց ինոնց վէրէն։ Էն թօփուզն էկաւ Սանասարի դլխի վերայից ընցաւ առանց վնաս տալու։

Ինչի որ Սանասար մէյդան էլնելուն պէս էս աղօթքն արեր էր ասելով.

Կիշեմ խացն ու կինին.
Տէր կենդանին.
Որ խաչ պատրաստին
Աչուի Սանասարի աչ թևին.
Ու պահապան կենայ Սանասարին.

Եա Մարաթայ պանցր Ասպածածին։

Էն թօփուզ թալելիւն պէս, դէւ վաղէվազ դէխ Սանասարն էկաւ. ասաց. «էյ խողածին, խող իլ՝ խող դառնաս»։

Սանասարն ասաց. Ջէ ես ապաւհներ եմ էն Տէր կենդանին, Աչն ի թիւին,

Որ պախապան ի Սանասարին։

Էսա խօսքի վէրէն դէւն ասաց զարմանալով. Եա՛. դու Սա՛սնայ թագաւոր Սանասա՞րն ես։ Որ ըսկուն ի. էլ թօպայ. ախտ կանեմ վէր իմ եօթ պռոտի որ ըսդիւց ձեր ձե դէմ չկռուիմ։

Մինակ էսա կը խնդրեմ ձեզնից որ ձեր վէրէն աղէկըմ տեղեկութեն դաք ձիկ։

Սանասարն ասաց. Ջէ. քանի որ դու քո դարպ զարկիր պռծար. պէտք ի որ ես էլ իմ դարպ զանեմ. ապա նստինք ախ-պօր պէս գրիւցենք։

Սանասար խրաման արաց՝ որ խոր ըմ փորեն էն դեղ. եփ խոր փորուաւ՝ Սանասար ասաց դէւին, որ էն խորի մէջ մտնի. ու նորէն կրկնից ուր աղօթքն ասաց.

Կյիշամ խացն ու կինին
Տէր կենդանին,
Որ խաչ պատրաստեն
Աչուի Սանասարի աչ թևին,
Չէնի որ ինոր դարպն էրթայ քիւսըն քամին,
Ապա թող կտրի ականջ դէւին։

Էս աղօթքն ասելուն պէս, բաշից թուրն ու զարկից էն դէւի ականջ կտրից։

Տէւն ասաց. Ես քե գէրի. էլ խէրիմ ի. մէնակ թէ իմ խընդերքն էն ի քեզնից, որ ինչէս ես եմ պախտ դուի եա, դիւն էլ ես պախտ տաս ծիկ. ու ասես. թէ որ դու չես Սասմա թակաւոր Սանասար ինոր վէրէն ծիկ տեղեկութիւն ըմ տաս. մէկ էլ եփ կը խասնես էնոր մօտ. էն օրօխկես գայ մօդ մեր Ջանփօլադ թադաւոր։

Սանասար բան ըմ չասաց էն դէւին, չիւնէի ինե որ աւ անելու համար զադացեր էր թախթից. թակաւորութեն տուէր էր ուր մօր Սանդուխ խաթիւնին։

Գանե եօթ ճօղ ծամ կյի-արին.

Եօթ ճօղ ծամ Գիւ-հար էն ականջ կտրած դէւի ևարն էր. ինոր համար եր տեսաւ ինոր կդրած ականջ շատ մոթաւ. շատ էլ խաթըր ինաց Սանասարից։ Շուտըմ Գիւհար թուղթըմ գրեց իդուր եամուն. եամին էն թուղթ տարաւ խասուց Սանասարին։ Էն թղթի մէջ գրած էր, եթէ Սանասար, ինչ կանես արա՝ խեղ

ախպօրդ Պախտասարին ձիկ օգնուԹիւն արի. դէւեր կայներ են կռիւ կուղեն. ես մէնակ եմ.չեմ կանա կայնի ինոնց դէմ։

Ջանփօլատն էլ շուտ ըմ գաշիւշներ օրօխկեց ու յըժէն ճանապհատպէրան կայնըցուց։

Էն ժամանակ Սանասարն ու Պաղտասար շուռըմ էլան խէճան ուրինց քամու ձիանք ու կշեցին սարն վեր։ Շատ կնացին, ֆիչ կնացին, խասան չուր վրէ Պաթման գետի կարմունջ. էնդէղ տէսան 40 դէւեր նստած, որ ախպէրին մէմէկու։ Էս դէւերն էլ Ջան փոլադի Թշնամիեն էն որ էնդէղ սեղան դրեր են. կուդեն ու կը խմեն։ Իսոնք ևփ տեսան Սանասարին ու Պաղդասարին՝ շատ ուրախացան. շուռըմ էլան ուրինց տեղէն. Սանասարն ու Պաղդասարն էջիւցին ձիերէն. ուրինց խեղ սեղան նստըցուցին. կերան, խմեն, շատ ուրախութեն արին. ապա էլան վեր որ խէճնեն ձեանք ու իննեն ճանապա։

Էն ժամանակ էն դէւերուց ճոչ ախպէրն ասաց. էանի որ պիտի երթաք. պէտք ի առաջ դեսնաք մեր մէր. էն ինչ խրատ որ կուտայ քի՝ դիւք ըսկուն արէք, որ վնասըմ չի պայ քե Ջանփոլադից։

Սանասարին ասաց՝ կնա մալ տանտուն, էնդեղնի մեր մէր. որ ուր ծծեր աջ ու ծախ թիւեերաց վէրէն Թալած՝ խաց կը Թխի. Թէ որ աչողար իննոր ծծի պտուկ պերանդ առնել ետւանց. էն ժամանակ կը խասնես էո սրտի մուրազին. Թէ չաչողար շատ պիտի վնասուես։

Սանասար ևփ տուն մտաւ, տեսաւ որ ախպէրն սարի պէս կնիկըմ ուր էրկու ծծեր էրկու Թեւքերաց վէրին Թալած հոգիխաց էր Թխե։

Էնիկ տեսնալուն պէս շուռըմ խասաւ եղիւանց ու էնոր ծծի պտուկն առեց պերան։

Կնիկն ասաց. խողածին. կոտրի էն պէրան որ էսա քե աասաց. Թէ չէ դու իմ պատրաստ կեր պիտի էլնիր մկայ։ Աման էս կերպով տիւն էլ էլար իմ զաւկներաց մէկ։

Էսա կնիկ ուր չէէլուԹնի ժամանակ Ջանփօլադի հարն էր էլի, ընոր խամար Ջանփօլադին էլ ասեր էր Թէ տիւ ըսկուն կդրիճ ես որ աշխար արարած կը դողայ քեզնից. էլ դու վերմից կը վախենաս. Ջանփօլադն էլ ինոր ասեր էր, ես ուրիշ ոչ մէկ դեղից վախ չունեմ. իմ վախ մէնակ Սասնայ կդրճներաց մէնէն ի. ու իմ մախ հա՛ ճոչ Մելքոնից, հա՛ ԴաւիԹից, Սանասարից։

Իսոր խամար ասաց Սանասարին Ջանփօլադի էս խօսքեր, ու ինոր փոխարէն փէշքէշ ուղեց ինորից։

Սանասարն էլ ասաց կիդես որ իմ խօրհուրդ Արապսդանայ

մէջ կարմիր դէւի խեղ կոիւ կանի մկա. ախր էլնի որ մենք էրկու ախպէրով կռուինք էնոր խեղ ու ղէնիկ սպանելով՝ քո տղէն ինոնց իշխան դնենք։

Կնիկն ասաց՝ թէհէ. դո՛ւ պիտի սպանես էն կարմիր դէւ, որ խողածնից իսկի վախ չունի։ Ինչ կանդար որ հօթ ճօղածամ Գիւհար քո քորն ի. էն դէւին էլ կնիկնի. իսոր խամար էն ուր էրիկ չէ թաղնի քե պռնի։ Իսոր խամար ես կասեմ որ ինորից պաղ-րաստ կենաս միշտ որ չխապուես ու յաղթուես։

Մկայ ֆանի որ տիւ էլար իմ զաւկներաց, մէկ քե ասեմ թէ ինչ կերպով պիտի աջողես էն սպանել։ Առաջ կերթաս հօթ ճօղ ծամ Գիւհարին կասես, որ քե ուսուցի պարոն Տէր Ներսեսի ա-ղօթք։ Սանասարն ասաց՝ ես էն աղօթք կիդեմ, զաթի ինոր վէրէն էլ աւելցուցեր ենք էս պան

Ցիշի խաչն ու գինին
Տէր կենդանին
Մարութայ պանցր Աստածածին,
Որ խաչ պատրաստի խաչուի
Սանասարի աչ թիւին։

Ես. Սանասար. մկայ կիդեմոր դու էդ աղօթքի շնոխքով պիտ աղթես քո թշնամուն։ Ամեն քե ասեմ, թէ ինչ տնելու ես էնէկ աղթելուց վերչ։ Եվ էն էլ մնուցես. էնոր կրակէ ձիըմ կայ. էն ձին առնես էե. ինոր մարիֆաթ շատ ի։

Էս ժամանակ հօթ ճօղածամ Գիւհարն ասաց կարմիր դէւին. շուտ վեր էլի. խողածինըմ ուր արնով էի մաղաղ իկեր։

Կարմիր դէւն էս խօսք լսելուն պէս, վեր թռաւ ու եկ տես-սաւ Սանասարն ու Պաղդասարն, ասաց, թէհը՛, դիւք էն կան-տար պատիկ էք որ ոչ կահվալթի էք, ոչ էլ ճաշ, խեղճ զաւալիք, ձե ձր ֆամին ըսկենայ եպե իմ ոտ, դէ նստէք, քիչըմ խաց կէ-րէք ու ճիւր խմէք, տեսնանք խենք Աստուած ինչ կուտայ։ Եվ նստան խաց ուտելու, կարմիր դէւն ասաց. դէհ ասէք խենք, դիւք ինչէխ փոթաք կարմիր դէւի ձեռնից ու խասաք ըստեղ։ Մէկ էլ ասէք խենք, ինչ ասաց ու ինչ խրատ իդու ձե։

Սանասարն ասաց. Մե պատուերեց որ բարև ունենք ես, ու ասենք, թէ Սանասար ինչ վախտ քո մօտ կը խասնի, շուտըմ դի-մացն էլնես ու կռուես խետ, քո զարկած դրոպն էլ երեքից աւե-լի չէլնի։

Կարմիր դէւն ասաց. Ա՛ա, զաթի մեր դրոպն երեքից աւելի չէ, ամեն ես մկայ խալիորցեր եմ, չեմ կանայ կռուի, թող ձեր խօրքիւր՝ հօթ ճօղ ծամ Գիւհար կռուի իմ տեղ։

Սանասարն էլ ասաց իմ խօրքիւրն էլ պատուէցիր ի, չի կանայ

կռուի, էն մե օրօխկեց որ խեւո ֆե կռուենք։

Յացից վերջ էլան մէյդան, Սանասարն ասաց կարմիր դէուուն, առաջ մինք զանենք, թէ դիու։

Դէւն ասաց. Գէտք ի որ առաջ դիւք զանէք, ֆանի որ դիւք էք իկե իմ մօտ։

Սանասարն ասաց. Ինչ կանդար որ մենք ինք իկե առաջ. ման դիու մե կանչեր ես։

Տէւն ասաց. Թէ որ ես եմ կանչե ձե, դմր ի իմ ձեռագիր։

Էն ժամանակ Սանասարն շոտմ խանեց ծոցէն հնոր ու նշանց իտուր։

Շատ աղէկ, ասաց կարմիր դէւ. քանի որ էդա ըսկնայ ի, առաչ ես կը զանեմ, դէ ասա խենք ի՞նչէս կուզես որ զանեմ։

Սանասարն ասաց. Ինչ որ ֆո խոգին կուզի՝ էն արա։

Դէւն ասաց՝ ես ուրիշ պան պիտի չանեմ, ապա իրեք խադ թօփուզ պիտի զանեմ։

Էն ժամանակ Սանասարն կայնաւ դաշտի մէջտեղ։ կարմիր դէւն էլ շողըմ խէծաւ ուր կրակէ ձին. ու մէկ սահաթի չափ զադացաւ. կայնաւ էն դեղէն ու ուր թօփուզն անդրկեց վէր Սանասարին։

Էն ժամանակ Սանասար շողըմ ասաց ուր աղօթք։ Ինոր խամար կարմիր դէւի թօփուզ Սանասարից 40 գաղ զաղ ինկաւ. աման ըսկուն թօղ ու դուման խանեց որ էրկինէն ու գէդինք մթնաւ։

Էն ժամանակ կարմիր դէւ ուրախ ուրախ վազեց ասելով. Խողածին, խող իր՝ խող դառձար։

Սանասարն ասաց. Ջէ. քո ասած խողածին կէօ ասլանի մը պէս քո առջևն ի կայնե սաղ սէլիմ։

Կայմիր դէւ եվ տէսաւ ասաց. Հէյ վաթխ. ինչ էր պատճառ որ էսա խողածին սաղ մնաց, ըսկուն կէրէւայ որ դարպս պակաս էր։

Շող ըմ քշեց նորէն ուր կրակէ ձին ու էրկու սահաթի չափ զադացաւ, ու էն թօփուզ նորէն անթուկեց դեխ Սանասար։ Աման էն թօփուզ ճորով էրկնուց դակ էկաւ. ու Սանասարի մէկ մազ պիլա չխոռնեց։ Ըսդրիւս կարմիր դէւ նորէն վազեց ու ասաց. Խոդածին, խող իր՝ խող դառձար։ Զիւմէի եվ էն թօփուզ կը թալէր, Սանասար ուր աղօթք կը կրկնէր. հնոր խամար էն թօփուզն էնորմից ֆառսուն գաղ զաղ ինկեր էր։

Սանասարն նորէն պոռաց, ասաց. Ջէ. խողածին ասլանի պէս կէօ ֆո առջևն ի կայնե, Աստէծու շնորհով։

կարմիր դէւն ասաց. Հէյ վաթխ. էս էլ չէլաւ. ըսկուն կէրէւայ որ մէյդանս ֆիչ եմ արի նորէն։ Ըսդրիւս նորէն քշեց ուր ձին. ու իրեք սահաթի չափ զադացաւ. թօփուզն իթալ։ Աման էն թօ-

վուզ 40 գազ նարէն զադ ինկաւ Սանասարից։ Տէւը շոդ ըմ ափալ թափալ վազեց դեխ Սանասարն ու ասաց. Խողածին, խող իր՝ խող դառձար։

Չէ, ասաց Սանասար. ֆո ասած խողածին կէօ ասլանի պէս ֆո առչևն ի կայնե։

Տէւ եվի էս պան տէսաւ՝ էլ էրկինէն ու երկիր մըթնաւ աչքերաց ու ասաց խեղճ խեղճ. էլ սդրիւս դօր քոն ի. ինչ կուզես՝ էն արա։

Սանասարն ասաց ստինիւս ստրիւս ի ես դէօրն ի եմ զօռն ի դէհ էլի ասաց կարմիր ղէւուն. քո ցօրեն խան էսա խորից ու դու ինոր մէջ մտի։ Դէւ շոդ ըմ խանել իդուր ցորեն էն խորից ու ինք ինոր մէջ մտաւ։

Սանասարն ասաց. Բերել դու ֆառսուն դակ ըղտան կաշի ու ընոնցմով ծածկի խորի պէրան։ Դէւ ըսկուն արաց։

Սանասարն ասաց. Էսա մէկ դարպ Աստծուն խաթըր։ Մէկ խատ էլ ի զարկ. ասաց էս էլ իմ ծծաց կաթին ու ձեր տան մէչ կերած խացին խաթր։ Իմուն ճնաց մէկ դարպ։ Էն ժամանակ կրկնեց ուր աղօթքն ու ասաց.

Կը յիշամ խացն ու գինին,
Տէր կենդանին։
Զանեմ թուրն ի լանօռին,
Զերթայ իմ դարպ ֆիւլն ի ֆամին։

Ասաց ու քաշեց թուր. իզարկ թուր, էն թրով կտրեց ֆառսուն տակ կաշին ու կարմիր դէւ էրկու ճօղի բաժնեց. վերչէն էլ մէկ գազ էլ գէտին մտաւ էն թուր։ Աման իսկի վէր էն դէւին խապար չէլաւ, ու ասաց. կտրիչ, քո դարպն արա էրկու։

Չէ, ասաց Սանասար, կդրճի դարպ մէկ կէլնի էրկու չէլնի։ Դու հէլէ դիրըմ քե թափ դու. էնգախ պիտի տիանաս։

Կարմիր դէւ եվի տիր ըմ իրար դէպաւ՝ շուտըմ էլաւ էրկու կտոր ու գէդին ինկաւ։

Սանասարն խրաման արաց որ էն կաշիք վերուցեն, էն ժամանակ դիւս խանին կարմիր դէւի ճէնդէկ ու տարան խորեցին լացով ողբալով։

Խապար կնաց հօթ ճօղ ծամ Գիւհարին. ու էնիկ շատ մըռթաւ. չիւնքի ինք քառսուն դաւի կարմիր դէւին խայութիւն էր արե. ինոր խամար էլաւ զէհիր պատրաստեց ու էրօխկեց ուր ախպօր դղէյներ մօդ կանչեց։

Սանասար ու Գաղդասար թուղթըմ գրեցին քառսուն ախպէր դէւերաց որ ուրենց ճոչ ախպէրն օրօխկեն կարմիր դէւի

տեղ թակաւոր էլնելու խամար, ուրինք էլ էլան կնացին մօտ հօթ ճող ծամ Գիւհար։

Ինչ վերջ՝ քառասուն ախպէր դէվերաց ճոչ ախպէրն էկաւ ու դարմիր դէւի տեղ թակաւոր էլաւ։

Հօթ ճող ծամ Գիւհար ուր պատրաստած ղէհիր շարպաթի մէջ իլից ու օրօխկեց էն դէւի թակաւորութեն շինախաւորելու խամար։ Էն շարպաթից Սանասարն ու Պաղդասարն էլ խման. ու խմելուն պէս էլան սարխոշի պէս։ Սանասարն էլ էն կիշեր էրազմ էր դիտե թէ ուրինց մախ մէնակ հօթ ճող ծամ Գիւհարի ձեռնով պիտի գայ։

Աման հօթ ճող ծամ Գիւհար չլըսութեն դրեր էր վէրէն, խակի ուր արդի մոմուռ այտնի անել չէր իդա. ապա ինչ կանդար որ արտով թշնամի էր Սանասարին ու Պաղդասարին, աման հրեշտանց շատ ուրախ նշանց կուդէր ինքզինք։ Էնոր խամար եվ Սանասարն ու Պաղդասար տէսաւ՝ շուտըմ էնուց դիմացն էլաւ ու ասաց. Դիւք խազար պարով էք իկե. վեր իմ աչիչ, վէր իմ գլխուն. հա ձե շատ ի կարօդցե։ Ապա էդ տեսակ էք էսօր, ինչի ձեր դոն կերպ թալէր էք ու գէժ կաւրուի պէս էլէր էք։

Սանասար էս խօսքեր որ լսեց, շուտըմ խասաւ տեխ Գիւհար ու բռնեց էնոր հօթ ճող ծամեր. որոնց-մից հօթ ճաղգի քար կախած են ու կրկնելով ուր աղօթքն ու ասաց.

Կը յիշամ խայն ու գինին.

Տէր կինդանին։

Որ չերթա իմ դարպ էիւլն ի քամին։

Ասելուն պէս էաշեց ուր լսնար թուրն ու կտրեց էնոր հօթ ճող ծամեր գլխախաու։ Զանելուն պէս Գիւհարն ինկաւ գետին ու մեռաւ։ Ինոր խետ էիչ վերջ ենկան մեռան Սանասարն ու Պաղդասար, խամած ղէհերի խամար։

Սանասարի մախից վերչ՝ ինոր մէր Ծանդութ խաթիւն էլաւ թակաւոր, որ չուր ուր տղէն ճոճանէր։

Աւուր մէկ Ծանդութ խաթիւն խէծաւ ուր էուսկու ճալայ։ Կնաց սարեր գռաւու. չիւնէի շադոնց էր որ դիւս չէր էլի ուր տնից։ Մարդ պիտէր էն գախ՝ որ թամաշա անէր գինէ ինան ուր ձյնե։ Չիւնէի դրեր էր տադգէ այար էն ձիու վէրէն, ոսկի գամն ալ ինոր պէրան։ Ինքն էլ խագեր էր էրկէթ խալաւ. պօղպէտէ սօլեր. ձեռ պռներ էր Սանասարի թօվուզ. կալխան էլ համակ կապած. էլաւ քշեց չուր սարեր մէկ։

Շատ կնաց, ֆիչ կնաց, խասաւ էն ախպրի վէրէն, որմից Սանդուխ ճիւր էր խմե։

Էն ախպիւր անմախական ախպիւր էր, վով որ ինոր ճրից խմէր, կը կտրճանէր ու կանմախանէր։ Էնդեղ շուտըմ Յանդուխթ խաթիւն էջաւ դակ ուր ձիուց, գամ խանեց պէնից, իթօղ որ ա-րածա։ Ինքը էլ էնդեղ նստաւ. կէրաւ ու խմաւ էն աղպրի ճրից ու լուացուաւ. ձիուն էլ խմըցուցելուց եդ ենկաւ էն դէղ ինաւ։ Էնդէղ գալիւց առաջ ինքը էլ, ուր ձին էլ շատ զապուն ին. աման էն ջրից խմելիւն պէս կլաւցաւ ու պետացաւ. էլան չանք սար մէկ-ըսկուն որ Յանդուխթ խաթիւն զարթաւ զարմացաւ եփ տէսաւ որ ինք ու ուր ձին էլ կանդար կլաւցած ու պէտացած, Տէր Աս-տուած, ասայ Յանդիւխթ, մենք որ էս տեղ էկանք, շատ զապուն ինք. ինչխ էլաւ մկա որ ըսկնա փոխվանիֆ մէկէն։ Ասաց ու խէծաւ ձին, դառձաւ տուն։ Եփ տուն կնաց զըմէնին էլ պատմեց էն խրշալի բան։

Շատ մի զարմանա, ասաց Սանդուխ. մի գիրֆ ըմ կայ. ինոր մէջ գրուկ ի զաթի. թէ վով որ էն ախպրի ջրից խմի՝ շնօխք ու զօրութիւն կառնի, ինոր խամարի որ թէ դու, թէ ֆո ձին ըսկէնա վոխուաֆ պիրդան։

Տառնանք ճօչ Մէլքոնին։

Ճոչ Մէլքոն եփ էլաւ եօթ տարեկան, դրին վարժատուն. էնդէղ Աստծու խրամանֆով ֆիչ ժամանակի մէջ ամէն պաներ սորվաւ, ու ամէն շնողֆով լցուաւ, վերջ ուր մօրն ասաց. Մարէ, խէրիֆ չի՞ որ ես ըսկնա ճնամ. խրման դու որ ես էլ խնծնիմ ձին ու էրթամ սարեր ֆարեր պտուտեմ. աւ անեմ. մարդու մէջ մտնեմ որ մարդ էլնեմ։

Մէրն ասաց. Պալա. հալա դու պստիկ ես, չես կանա էդ բա-նեըն անի. խամբերի քանի մը տարի էլ. ապա ֆո ուզածի պէս արա։

Աման Մէլֆոն միշտ կը կրկնէր ուր խնդիրֆ ու կասէր. Քա-նի որ մեր տուն մարդ չկայ. կէլնի որ օրմ դէւեր մեր վրէն գան ու մե վնաս տան. ուրենց դիմաց մարդ չտեսնալիւն խամար. աղէկ ի որ մկաւըննէ կրթուեմ ու պատրաստուեմ դիւշմընի դէմ կայնիլու խամար։

Յանդուխթ խաթիւն եփ տեսաւ թէ չի կանա վէր լաճուն՝ պստեկ ձիըմ պերիլ իտուր ու ֆանի մը խոլաճներաց խեղ օրօխ-կնց դաշտ։

Էս ժամանակ Մարայ մէջ Մէլիք ըմ կէր, որ էն դեղ թակաւոր էր։ Էս մարդ եփ իմցաւ որ Սասունի թակաւոր Սանասար մեռիլ ի-

ու մէնակ պստիկ տղէ մը Ծնացեր ի տան մէջ. շուտըմ էլաւ քաշեց ուր ասքար ու էկաւ Յանդուխտ խաթխունի վէրէն։

Էկաւ, խասաւ չուր փրէ պաթմանի կարմունջ. խապար օրօխկից Յանդուխտին ու ասաց. Ես ես ըռդայով Սասուն ձիկ թաւլիմ կանես. ես դիւս կելնես՝ իմ դիմաց կուռ կանես։

Յանդուխտ խաթխուն շուտըմ էլաւ թուղթ ըմ գրեց, խուռ համուն էն թուղթ տարաւ խասուց Մարայ մելիքի ձեռ։ էն թղթի մէջ գրուվ էր թէ՝ ես կնիկ եմ, չեմ կանա խետ ես կռուի. ձիկ իրեք տարի ժամանակ դու, որ ես քո ուղած վէրկին տամ ու էլնեմ քե թաղի։

Մարայ Մելիք ընդունից էս պայման ու իրեւ տարի ժամանակ խուռ Յանդուխտին, ճոչ Մէլէոն աւուր մէկ էլաւ կնաց սար աւ անելու, մէկ էլ անկարծ դէպըմ ինոր առաջն էլաւ ու ասաց, ճ բարով, Մէլէոն ջան, դու էն չափ ճոճացեր ես որ հիմր ես սար աւ անելու, աման կիդցած էլնես, որ Զանփօլադ ձիկ օրօխկեր ի ըստեղ որ քե սպանեմ։

Ճոչ Մելէոն ասաց. Շատ աղէկ, թէ որ կանաս՝ զարկ սպանի ձիկ։

Դէւն ասաց. Զէ, ես չեմ կանա ես սպանի, մէնակ թէ մէկ խնդիրմ մունեմ, որ դու ձիկ բախտ տաս. ինչ որ քե ասեմ՝ էն անես։

Մէլէոն ասաց. Իմ տուած խօսք խօսք ի. թէ որ դիւմ դէւ էմ. մենք էլ ֆէրիզ փէյլէւան ենք, մեր մօտ սուտ չկայ. մենք մեր խօսքին տէր ենք. ինչ որ կուզես՝ էն արա։ Պիտի ասես թէ ինչի՞ ես խրատ կուտամ քե. գիտցած էլնէս որ մեր դէւերն էլ չեն սիրի Զանփոլադին, ինոր խամար կուզեն որ էն սպանուի ու վերնայ մէջ տեղէն։ Իմ խրատն էն ի քե, որ առաջ քո ճոչ մօր մօտն էրթաս, ապա կռուես Զանփօլադի խետ, թէ չէ շատ կը վնասուես։

Էս խօսքի վէրէն ճոչ Մէլքոն հի կնաց տուն, ուր ճոչ մօր ձեռ պազից, ասաց. Գիդցած էլնես որ Զանփօլադ խապար օրօխկե ձիկ կուի կուզի։

Սանդուխն ասաց. Ֆե կուրպան. դու էլի տղայ ես. ինչի պիտի կռուես ինոր խետ։ Էնիկ աշխարիս ամեն թակաւորներէն աւելի զօռպա ի. մէկ էլ էս կայ որ ինոր վէրէն սուր թուր չեն պանի։ Էն մէկ մուխուն չի մեռնի, մեռնեմ քե քիչ ըմ խամփերի չուր ճոճանաս, ապա էրթաս կռիս։

Ճոչ Մէլէոն ասաց. Ամբաիրելն ուղէկ, աման բախտ եմ տուն Զանփօլադի դէւին՝ որ կռուեմ ինոր խետ։

Սանդուխն ասաց. Էլի տաւրներ դար դաշտ ելկա. ես խրամանն

կը պերեմ Ջանփօլադից որ քանի մը տարի էլ խամփերի։

Տղէն ընդունեց ուր ճոչ մօր խօսք. ու էլաւ տաւարներ դաշտ տարաւ արածելու։

Սանդուխն էլ էլաւ թուղթըմ գրեց, իտուր քամուն. քամին էլ տարաւ էն թուղթ խասուց Ջանփօլադի ձեռ։ Էն թղթի մէջ Սանդուխ իրեք տարի Ջանփօլադից ժամանակ ուղել էր. Ջանփօլադն էլ ընդունեց ինոր խնդիրք ու իրեք տարի ժամանակ իտուր Սանդուխին։

Ճոչ Մէլիոն եփ տաւըրներ դաշտ տարաւ՝ յանկարծ էն տեղ տէսաւ ախագին գոմէշ ըմ որ ուր գլօխ տնկած ուր վէրէն կու գէր։ Մէլիոն շուտըմ քար վէրցիւց գէդնից. իղարկ էն գոմշուն. ու էն գոմէշն ինկաւ էնդէղ՝ խադաւ։

Մէլիոն եփ էս պան տէսաւ՝ տաւրները թէսլիմ արաց ուրիշի մը, ու ինք տուն դարձաւ, վարդէվազ պատմեց Սանդուխին։

Սանդուխ եփ լսաւ Մէլիոնի խօսքն՝ ասաց. Շուտ վազի դաշտ. ու էն խար կնդի ըև ձիկ։

Մէլիոն շուտըմ վազից դաշտ ու էն խար կնդաւ իբև Սանդուխին։

Սանդուխն ասաց. Շուտըմ տար էդ խար տուր դարպնին որ խալի ու էն որմից խիրուն ըմ շինի։ Մելքոն տարաւ ու քիչ հետք խիրուն շինել տալով՝ ուր մամիկին իբև։

Ապա խառցուց դարպնին թէ խանի՞ օրից կանա թուր ըմ շինի էն ինացած խարով։ Մէլիոն խաոցուց էն ուսթից. ուսթէն էլ ասաց՝ թէ տասն օր ճորօվ կանամ շինե։

Սանդուխ տասն օրից հետք օրօխկից որ էն թուր պիրի. մէկ էլ ասաց Մէլիոնին որ իշար ինայ. չէլնի թէ դարպին քե խապի. ուրիշ թուր տայ ինոր տեղ։ Էս պան խասկնալու խամար կառնես էս խիրուն խետդ. ու եփ էն թուր կու տայ քե՝ շուտըմ էս խիրուն էն թրի մէջ գանես, թէ որ թուր չծակի, կառնես կը պերես։

Ճոչ Մէլիոն խերուն ձեռ պռնեց, կնաց մօտ դարպին, դարպին էլ իպե թուր ըմ Մէլիոնին իտուր։

Ճոչ Մելքոն թուրն առնելուն պէս՝ խիրուն մէջն իղարկ, որ մէկ կողմից ծակեց, դիւս էլաւ։

Մէլիոն ասաց՝ Դէ էսա իմ թուր չի։ Դարպին էլ ոսկի թուրըմ իպե։ Ճոչ Մէլքոն ուր ձեռաց խիրունով էն թուրն էլ ծակեց։ Մէլքոն ասաց՝ Զէ, էս էլ իմ թուր չի։

Ուսթէն ասաց՝ Տղա, դու ծուռ ես, ինչ ես, ապա քո թուրն ինչէ կելնի։ Ուսթի ճար եփ կտրաւ, ուրիշ թուրըմ իպե, Մէլիոնին իտուր, Մելքոն շուտըմ ուր խերուն էն թրին ի գարկ,

խերուն չուր կէս մէնակ մտաւ։ Մէլքոն ասաց՝ Չէ, ախպէր, էս էլ իմ թուր չի։ Էն թուր շինուկ էր էն խալուած քարի էրկոյ, ինոր խամար խերուն ինոր կէս ծակեց։ Ջիւնէի էն քար էրկնուց ինկեր էր կէծակի խետ, ինոր խամար շատ զօրութեն ունէր։

Դարպին ևի տեսաւ որ Մէլքոն էն թուրն առեց ճանպախ ինկաւ՝ շուտըմ վէրիւց ուր պախած թուր ու Մէլքոնի եաւն ինկաւ որ ինոր սպանէր։ Մէլքոն էս բան տեսնալուն պէս, եղ դառձաւ ու ինք աւելի շուտ իզարկ դարպնին որ ինկաւ մեռաւ։ Մէլքոն էլ առնց, թուրն ինոր ձեռնից ու տարաւ ուր ճոչ մօր. պատմելով ինոր ամէն ընցածն ու դառցած։

Սանդուխ ևի էս պան լսաւ՝ շատ ուրախցաւ, ասաց՝ Աղէկ արիր որ մեռուցիր էն դարպին, թէ չէ՝ էնիկ շատ փորձանէ պիտի պերէր քո գլօխ, չիւնէի էն ի իմ ուղած թուր որ խերուն չի ծակէ։ Ճոչ Մէլքոն ասաց՝ Հանի որ էսպէս թուր ըմ ինկաւ իմ ձեռ՝ մկայ ժամանակն ի որ ես էրթամ Ջանփօլադի վէրէն կռիւ, քանի որ խօսք իմ տուն ինոր։

Մամիկն ասաց. Աղէկ, մկայ ինչ որ կուզիս, էն արա. ամեն ինչ որ կասեմ քե՝ էն անելու եաւ կէլնես, կը խէծնես քուռկու ճալալին, որ տասնը խինդ տարի ի դիւս չէլի քո խօր մեռնելիւց պարի։ Գիդնաս որ էնիկ Ֆո խօր ձին ի ու ամէն տեսակ շնոխով լիցուած ի։ Տէհ. մկա կնա խօրդ էրկէթ խալէներ խագի. էրկէթ Ռուլախ գլօխդ տիր. պօղպըտէ ճղմէքն էլ ոտքերդ հաշի. նետ ու աներդն ու կալխան քաժակդ թալ. թօփուդն էլ ձեռդ պռնի, քշի։

Տէհ, տմր առաջ էն ձին ջրի. ամեն աչքի՝ որ դէւերը էն ձին չխլեն քեզնից, չիւնէի իրանց ախուն էն ձին ուր փայխից դիւս չէր խանուի. ապա ինոր ակերն ու ջուր փայախ կը տարուին, էն ձիու կէրած խմոր ու թիւղ են. խմածն էլ անմախական ախպրի ջուրն էր։

Սանդուխն ասաց՝ Եփ կէրթաս էն ձիով, ամէնևին չկայնես. հանի որ էն ձին չի կայնի. ու ինչ ախպրի ժօտ որ կայնելու կէլնի՝ շուտըմ կէջնես տակ, կը խանես գամի ինոր բէնից. աղէկ ըմ կը ջրես ու Ֆո ձեռնով էլ կը լուաս, տուն էլ կուշտ ըմ կը խմես էն ջրից ու վերջ կը խէծնես, ճանպախ կինես։

Ճոչ Մէլքոն էս իրատն առնելուն պէս, շուտըմ պատրաստուաւ ոտքից չուր գլօխ ու ձիու համակ թռաւ։ Շատ կնաց, հիչ կնաց, մէկ էլ տէսաւ որ ձին անկարծ խրխնջալով կնաց աղբրի մը գլոխ կայնաւ։ Մէլքոն էս պան տէսնալուն պէս, շուտըմ էջաւ ձիուց, լուացուաւ ինոր ջրով ու խմեց կուշտ կուշտ. ձին էլ լուացց ու խմցուց էն ջրից։ Ըստիւց ետ ինկաւ էնդէղ ինաւ։ Եփ

քանի մը տահաթ վերջ զարթաւ՝ տեսաւ որ ինքն էլ, ուր ձին էլ շատ փոխուիր են, էղչափ կլաւցեր ու պէդացել են, որ էլեր են չանկ ժժդահար մը։ Իսոր վէրէն շուտըմ խէծաւ ձին ու տուն դառցաւ։

Մամիկ եփ տէսաւ՝ շատ ուրախցաւ ու ասաց. Դէհ մկա էլի ֆո խոր խալէւներով ու թախըմներով խագուի ու խփուի, խէծի ձին ու կնա. Աստծու աչք վէր քե էլնի։ Աման ես քե ասեմ որ դիւ քո Ներսէսի աղօթքն ու աստուածք չմոռնաս իսկի. ամէն նեղ ինկած ժամանակն ասես։ Էրթացած ժամանակն էլ աչքի՝ որ ձին ինչ տեղ կայնելու կէլնի՝ էնդեղ մէնակ կայնես. չէլնի թէ քշես. էնդեղ պէտք ի նստես խանզատանաս. որ էս կերպով խոսնես Զանփօլադի մօտ։

Ճոչ Մէլքոն խէծաւ քուռկու ճալալին ու ինկաւ ճանապախ։ Զուր իրիկուն էրթալուց եդ կայնաւ մէկ սարի մը վրէրէն. էնդեղ ախպրի մը գլօխ նստաւ. թէ ինչ թէ ձին կէրան ու խման ու ինքըն էլ ալաց ուր աղօթք խանգիստ պատկաւ, չուր առաւտուն։

Եփ առաւտուն զարթաւ, նորէն տուն դառցաւ. ասաց Սանդուխին. ես ֆո խրատներաց շատ պէտք ունեմ, ինչ անեմ որ իմ գլօխ միշտ պանցր ճնայ դիւշմնի առջև։

Սանդուխն ասաց. Եփ էտա խօսքն ասիր՝ ես էլ պէտք էլածն ասեմ ֆե, եփ սեղան կը նստէք խաց ուտելու՝ աչքի որ քեղնից առաջ ուր ձեռ կերակուրին տանող մարդ չանես քե ինկեր։

Ինչէ՞. իդոր պատճառն ի՞նչ ի, ասաց Մէլքոն ուր մամկէն։

Սանդուխն ասաց. էն մարդ որ ուր ձեռ քեղնից առաջ կը պարզի սեղան, էն նշան ի որ քե խնազանդ չի ճնայ։

Մէկ էլ կրկնեց Սանդուխն ու ասաց. կիդես որ քո պատկուելու ժամանակ մօտացես, քե ասեմ թէ ինչ աղչիկ առնելու ես։ կէրթաս վէր ճանպախին կը կայնես, էնդեղ Սիւտակ դէւ ըմ պիտի ռաստ գայ քե. էն դէւ կէլնի ութ տարի որ Ասլխան անունով աղչիկ ըմ փախցուցիր ի, աման իսկի չի մօտացի ինոր, էն ախչիկ կոյս ի. էն մէնակ առնելու ես քե կնիկ։

Մէլքոն ասաց. Դու ի՞նչ դիդես, որ էն ախչիկ փախցուցես։

Սանդուխն ասաց՝ թէ ժամանակին էն աղչէկան խէր մէրն էկան մօտ ձիկ գանգատ. ասելով թէ Սիւտակ դէւ իմ աղչիկ փախցուցեց, իսոր խամար կիտեմ թէ էն ախչիկ ուր կամքով չի կնացե։

Մէլքոն ասաց. Էրթալն աղէկ. աման վրէվ պիտի էլնի ձիկ ինկեր։

Սանդուխն ասաց. Սասնայ կտրճներ ինկերի պէտք չունեն. ուրենց ինկեր ուրենք մէնակ էլնելու են. աման էն պայմանով

որ դու քո Ներսէսին չմոռնաս իսկի, Աստծու ճանպխիցն էլ չըշեղիս։

Ճոչ Մէլքոն իստուց ետ թաքիւս տուաւու, խէծաւ քուռկու Ճալալին ու ինկաւ ճանպախ։ Շատ կնաց ֆիչ կնաց՝ խասաւ պանցըր սարի մը գլօխ. էնդեղ անկարծ վէրու ոչխար ըմ տէսաւ. եփ ուղեց դանել էն ոչխար՝ շուտըմ փախաւ. կնաց մտաւ Ջանփօլադի չադէր. էնպէս ժամանակ ըմ որ Ջանփօլադն էլ կընացեր էր աւ աննելու։ Էն ոչխար՝ ըսկուն ոչխար մէր որ պատիկ ժամանակէն թէպիյէ էլէր էր. ու մարդու պէս խապար կը խասկնէր։ Ասելի թէ էն ոչխար Ջանփօլադի կէշիւշնէրէն մէկն էր. որ կէլնէր սարըր կը պատէր, եփ դիւշման ըմ տիսնէր՝ շուտըմ կը փախնէր, կէրթէր Ջանփօլադի չադըր կը մտնէր։ Էն էլ էս պան տեսնալուն պէս ուր աչքրներով դիւս կէլնէր կը վազէր էն կողմ։

Ջանփօլադ էն կիշեր էրազ մէր տիսի, էրազի մէջ տէսէլ էր որ ուր ձախ կողմ սիւցեր էր. մարդ մէլ էրէւացել էր ինոր ու ասել էր թէ դու ոչ մէկ տեղէ վախ չունես. քո վախ մէնակ Սասնայ տան կտրիճներէն լ։

Ճոչ Մէլքոն եփ տէսաւ որ էն վէրու ոչխար փախաւ մտաւ Ջանփօլադի չադըր, էն ոչխըրի իդեւանց կնաց ու էն չադըրի դռան առջև կայնաւ։ Մէկ էլ տէսաւ որ էն չադըրի դռան առջև ախաղին ֆիլ ըմ կայնել էր, մէկ պէդ մարդմ էլ էն չադրի տակ պառկիրէր, կը քնէր. էն մարդ էն կհախ որ ուր նաֆտա կուտէր կառնէր՝ կիդես թէ ախագին քամի մը կէլնէր որ էրկինքն ու կէտինք էլ սարսէր. էն շունշովն էլ չադրի դռնէն կախած խաուսուն կտրանոց առճիճ կը տանէր, կը պիրէր. աւ էն շարժումով կը խովխրէր էն քնած մարդու իրնս։

Ճոչ Մէլքոն եփ տէսաւ՝ պոռաց ու. ասաց. էյ կտրիճ, էլի, խէրիքի քնես, էլի տուր իմ աւ որ փախաւ քո չադրի տակ մտաւ։

Մէկ էլ տէսաւ էն կողմէն մարդագել պառաւ ըմ էկաւ էնդեղ որ մարդու մը ճուռ ըրռնած կուտէր։

Էսա պառաւն ասաց. Մարդ Աստծու, ինչ կանես. ինչի կարթնցուցես իմ տղէն. որ հէլէ էրկու օր չկայ էներ ի. պէտք ի որ եօթն օր էնի։

Մելքոն ասաց. Ես կուզեմ իմ վէրու ոչխար որ փախաւ էկաւ չադրի տակ, դէն շուտ արա արթնցու էո տղէն։

Մարդագել պառաւ թօրուան խառջէկաթըմ իրե իթալ Մէլքոնի առաջ. ասաց. էս խառջէկաթթալ էդա պուխէրիկ, քոդ աղէկ ըմ կրայնայ. ապա էն կրայցած խառջէկաթդնես ինոր ուտաց տակ որ արթննայ. թէ չէ, էնիկ իսկի չարթննայ։

Մէլքոն շուտ ըմ էն խառջէկաթն իթալ կրակ. աղէկ ըմ

կրայցուց, ապա էն իդիր Զանփօլադի ոտաց տակ. էն շուտ ըմ զարթաւ ու էրէշկտալով ասաց, օֆ. էս ինչ կանդար լու, ոչիլ կայ իմ տեղաց մէջ. իմ ոտքեր խօրօվեցին։

Մէրն ասաց. Ջէ պալա, վէր քե լու, ոչիլ չկայ. ապա դիւշմանմ միկեր ի. էլի տեսնանէ թէ ինչ պիտի անես։ Զանփօլադ Մէլէոնին տեսնալուն պէս՝ օֆ մարաց էն ուր խանած շնչով երկինէ երկիր դղրդաց. ու դառնալով տեխ Մէլէոն՝ ասաց. Ծողածին, խող իր՝ խող դառձար. կիտնալով թէ Մէլէոն ուր շունչով պիտի խորովուէր։

Աման Մէլէոն էն ժամանակ ուր խաչ պատրաստի աղօթք ասելուն խամար, բան մէլ չէլաւ ինոր, ապա ասաց. Ասլանի պէս Զանփօլադի առաջ կայնած. չէ, ես խող չեմ դառձե, էլի. շոտ ըմ դու իմ զարկած աւ որ ես չադրի տակ փախաւ։

Զանփօլադ էս խօսք լսելուն պէս, սարսափ ըմ էկաւ վէրէն ու ասաց դողդղալով, խողածին արի, նստի քիչ ըմ, տեսնամ թէ դու վրով ես,որ զեղէն կաս. դոր կէրթաս։ Էնով եդ թէ կառցար. զաթի կը տանես քո աւ. թէ չէ՝ Ասպած օղորմած ի էնկյախ։

Եփ Մէլէոն նստաւ, Զանփօլադ խառցուց ինոր, թէ որ երկրիցն ես. վրով ես. դոր կիրթաս։

Մէլքոն ասաց՝ Ես Սասնայ տնիցն եմ։

Զանփօլադն ասաց. Ծաւէն ուր թիւով, օձն ուր պոռտով չէր կանի գալ ըստեղ. դու ինչչա էկար։

Մէլքոն ասաց. Զիկ ճոչ Մէլքոն օրօխկեց։

Զանփօլադն ասաց. Սուտ-մասի. չէլնէ թէ դու ես ճոչ Մէլէոն. շիտակն ասա. թէ որ էն ես. արի բախդ տանէ մէմէկու. սորա կռուենէ։

Էս Զանփօլադ կախարդ էլնելու խամար աշխատաւ որ թուղթ թանաքով տալ կապս անել Մէլէոնին, աման ինչ կանդար որ աշխատաւ էն թուղթ չպռնեց վէր Մէլքոնին։

Զանփօլադ նորէն դառձաւ ասաց Մէլքոնին. Արի շիտակն ասա. դու ճիշդ Սասնայ տան ճոչ Մէլէոն չէս. չիւնէի ես էրազի մէջ խասկցերեմ որ իմ դիւշման էն տնիցն ի։

Ծա, ասաց Մէլքոն. ճիշդ որ կուզիս. ես Սասնայ տան ճոչ Մէլքոնն եմ։

Զանփօլադն ասաց. Թէ որ ըսկուն ի՝ արի ձիկ բախդ տուր որ էրթաս ճոչ Մէլէոն օրօխկիս գայ վէր ձիք կռիւ։

Ծա, ասաց Մէլէոն, ես իմ բախդ, որ էրթամ էն օրօխկեմ գայ վէր ես կռիւ։

Զանփօլադն ասաց. Քանի որ դիու բախդ տուիր էդ աղէկութեն անելու. ես էլ քե աղէկ փէշքէշըմ տամ։ Ասաց. եփ կէլնիս

ճանապահը խառնիս փրէ պադմանի մօդ, էն տեղ պիտի տեսնաս սիւդակ դէլըմ որ շատ խօրօտ աղջիկըմ փախցուցե. ու էն աղջիկ ուր մօտ չէ պախի, էն աղջիկ ես փէշիէշ. կ'առնես. կըտանես ես խամար որ խապար քո աւ կաժի։ Ուտելիւց, խմելիւց իդ Մէլ-ֆոն էլաւ ինկաւ ճանապախ, փրէ պաթմանի ճանապախ պոնեց ու քիչ հաթ խասաւ էն տեղ. տէսաւ Սիւդակ դէլ որ մտեր կը հէրի մը մէջ. էն հէրից էլ ախագին բոցըմ կը թալէր դիւս. հէրի պէրնի մօտ կայնաւ, պոռաց, Է, Սիւդակ դէլ, դիւս էլի. ես մէհուան իկի։

Էն ժամանակ խուռնի խրեղէն աղջիկըմ դիւս էլաւ. էն աղջիկ ինե տէսաւ էն խօրօդ կտրիճ. խալքապնաց էլաւ վէրէն. էն կանդար որ չխփաց ուր սրտի մէջ, շուտըմ ասաց. Է՛յ կտրիճ. խաւ ես ուր թիւով, օձն ուր պոռտով չին կանի գալ ըստեղ. դու ինչի էկար։ Նորէն խուրանթը մ'ախ խաշեց, ասաց. Էսա չէլնի աս տարի որ ես ըստեղն եմ ու կը տանջուեմ էս անիրաւ դէլի ձեռ. մէկ աղամարդու երես տեսնալու խասրաթ իմ ինացի։

Մէլֆոն ասաց. Դար ի Սիւդակ դէլ։

Աղջիկն ասաց. Էսա կէլնի էրկու օր որ քներ ի. յալա խինգ օր էլ պէտք ի որ արթնայ. չիւնէի պէտք ի որ հօթն օր ինի։

Մէլֆոն ասաց. Ապա եփ էն հօթն օր կը ինի. ինչի՞ չես փախնի։

Աղջիկն ասաց. Էդա փորձ խանի մը դիր արեր եմ. աման չեմ ալոդի. չիւնէի արթննալուն պէս կինի իմ եդև. ես ինչ կանդար էլ որ զաւտացած էլնեմ, ձիք կը խասնի ու կը պռնի։

Ապա ինչ անելու ի որ էն հօթն օրից առաջ զարթնի։

Աղջիկն ասաց. Պէտք ի որ էնա թաս տուռի կրակ, որ շիդակ ըմ կրայնա, ապա էն կրայցակ թաս դնելու ի ընդ արաց տակ որ արթնայ, թէ չէ ուրիշ ճար չկայ։

Մելքոն խասաւ շուռըմ առեց էն թաս ու կրակի մէջ իդիր. մէկ դիր փչելուն պէս կրայցաւ. էն կրայցուկ թասն առեց ու Սիւդակ դէլի ոտաց դակ դընկուն պէս էն զարթաւ ու ճոր ճրուելով ասաց. ծօ. Ասլխան. (աղջկան անուն) ինչի՞ իմ տեղ խօրօտ պատրաստած չիր. օֆ՛ լուեր, ոչինչ իմ ոտքերը խօրօվեցին։

Ասլխան ասաց. Օղորմած խէր, ինչ լու. ինչ ոչիլ. էլի. խողածին ըմ իկև. ես կուգի. էլի խենե. ինչ պատասխան պիտի տաս։

Աղջիկն առաջմանէ Մէլֆոնին ասեր էր, թէ էն դէլ ինչ կերպով սպանել կարելի ի, ասեր է թէ ինաւ մէկ խատ թուրմը կայ, թէ որ էն թուր կառծար ուրմից առնել՝ զաթի ինորով կանաս զինք սպանի. թէ չէ՝ կարելի չի։ Ձիւնքի, ասեր էր աղջիկ.

էն դէւ ուր էրկեթէ խալւի տակ կամիշից գործուած խարար մ'էլ ի խագի, էն խարար էլ իւրիշ բանով չի կտրուի. ապա մէնակ ինոր թուրը կէ կտրի էն խարար։

Մէլքոն մտաւ դէւուս չադէր, ու ինոր խետ բարև ստայ էլնելուց ետ նստան խաց ուտելու։

Տէւն ասաց. Ախր էլնի. որ համին էի եպի ըստեղ, ինչ պանի խամար կը պղոդես ըստեղերանք։

Մէլքոն ասաց. Ախր պարին վէրէդ էլնի, ես ևկեր եմ ըստեղ քո աղջիկն ուզելու խամար։ Սիւդակ դէւն ասաց. Թող քո ուզածն աղջիկն էլնե. բարով իկեր իս, խազար պարով. զաթի էսա աղջիկ էե լայեղ ի. էնիկ էսա կէլնի որ տաս տարի ի իմ մօտն ի. աման ինչէս որ եկի՝ ըսկուն էլ ստացեր ի. ես ընոր վէրէն էշկլու չեմ. ապա էն իմ աղջկան պէս պախեր եմ. մկա կուտամ քի առ տար, պարով վայելես։

Ջիչ վերջ Մէլքոն առեց աղջիկ ու դիւս էլաւ թէ չէ՝ աղջիկն ասաց ինոր. Սիւդակ դէւ ուր անդկի մէջ անգին մատնիկ մունի. պէտք ի որ էն էլ ուզիս իմ ջէհզի դեղ։ Մէլքոն շուտըմ նեռս մտաւ նորէն ու մատնիկն ուզեց Սիւդակ դէւից։

Տէւն ասաց. Էն մատնիկն էլ էե կուրպան եմ արե. քանի որ էդ աղջիկ իմ աղջկան պէս էե տուի, պէտք ի որ էն մատնիկն էլ տամ էնոր ջէհզ. աման, ասաց դէւ, կիդցած էլնես որ էսա մատնիկ փանզահար ակ ունի. եսի տեղ ըմ կէրթաս խաց ուտելու՝ պէտք ի որ էն մատնկի ակ առաջ քո պէրան տաս, սորա խաց ուտես։ Ինչ ժամանակ էլ նեղութնի մը մէջ կինես՝ թուղթ ըմ գրես, տաս համուն՝ ես շուտ ըմ կը խասնեմ։

Մէլքոն էն մատնիկն էլ առեց, դիւս էլաւ. խէծաւ ուր քուռկու ձէլալին, աղջիկն էլ իթալ ուր թաբէ ու ինկաւ ճանապախ։

Ճանապխու կեսուց խապար օրօխկեց Սանդուխին թէ՝ ես էկա-Սիւդակ դէւուց առած աղչիկն էլ խեդս ի։ Էս խօսք լսելուն պէս Խանդութ խաթիւն ուր մարդերով ու գիւղ հաղոով ճոչ Մէլքոնի դիմաց կնաց։

Խազար ուրախութնով առին Մէլքոն, ինանուր նշանլուն Ասլխան ու հաղաքն էկան։ Ջիչ վերչ երկրով էն դէղ ժողվուան, հօթ գիշեր, հօթ ցէրէկ խարսնես արին. Մէլքոն պսակեցին. պսակիլուց եդ էլ նորէն շատ ուրախութնով ինիկ թակաւոր արին ու թախթ նստցուցին։

Գաշեց ինն ամիս, չէաշեց, Ասլխան խաթիւն տղէմ խալի. ու էն տղի անուն դրին Օվան, որ շատ պանցր ու անուշ ձէն ունենալու խամար վերչ Ծէնով Օվան ասուաւ։

Էն տղի հառսունէ վերչացաւ չվերչացաւ՝ Մէլքոնի ճոչ մա-

մէն Սանդուխ խաթիւն մեռաւ։ Մեռնելու ժամանակ ապաշրհել էր Յանդուխ խաթիւնին՝ որ ուր անուն դնեն Մէլքոնի կընկ'ան վէրէն. ինոր խամար Ալխանի անուն դրին Սանդուխ։ Օվան օրէօր կը ճոճանէր. ըսկուն որ եվ ոտն իթալ մէչ իրեք տարուան, դիու կասիր 7-8 տարեկան տղայ էր. էն տեսակ պէտ պէրթակ էր։

Էրկու իրէք տարուց վիրչ Օվան դրին վարժատուն. ըսկուն խմաստուն էր որ քիչ ժամանակի մէչ շատ առաջացաւ. ուր ծէնէլ էն տեսակ պանցր ու խաղցր էր, որ թէ պօռալու էլնէր՝ ծէն կը խասնէր չուր խառուն օրուան ճանպախ մէկ. էն պատվ վարժապետն ինոր անուն իտիր Ծէնով Օվան։ Ինոր խետ շատ էլ աստուածավախ էր, իսկի չարութիւն չէր անի. մէկ մարդու էլ գէշութին չէր ուղի անել։

Օվանից վերչ՝ Սանդուխ խաթիւն ուրիշ տղէ մէլ իպե. ինոր անուն էլ դրին Աստղիկ թակաւոր։

Օրըմ՝ եվ ծոչ Մէլքոն նստել էր, կը մտածէր, մէկ էլ միտն իպե սր Ջանփօլադին խօսք էր տուե ծոչ Մհէր ինոր մօտ ճանպխելու, որ կուսէր խետ։ Ինոր խամար ասաց ինէն ուր. քանի որ ծոչ Մհէր չկայ, պէտք ի որ ես էրթամ վէր ինոր կուսիւ. քանի որ իմ տղէյներն էլ հալա տղայ են։ Էն ժամանակ շուտըմ ասաց ուր Ներսէսին, խագաւ էրկթէ խալաւ. թևն եթալ նետ ու անեղ, ծոռ պունեց ուր թօվուզ, էլաւ խէծաւ քուռկու ճալալին ու ինկաւ ճանպախ չուր Մսրայ բաղաք մէկ։

Կնաց, խասաւ Սիւդակ դէւու չադըր. ասաց ինոր թէ ես եկեր եմ, որ էրթամ վէր Ջանփօլադին կուսիւ, ինչ խրատ կուտաս ձիկ։

Սիւդակ դէւն ասաց. էրթալդ աղէկ. ամեն բե ասեմ թէ պօշ պան ի. դու չես կանա ինոր ախտի։

Չէ, ասաց, ծոչ Մէլքոն. ինչբա որ էն էլնի՝ պէտք ի որ էրթամ. չիւնքի բախտ եմ տուի ինոր սր կուսեմ խետ։

Սիւդակ դէւն ասաց. Քե ասեմ որ էնիկ իստրիս բե պիտի պունի ու շատ տեսակ չարչարանք պիտի տայ բե։

Մէլքոն ասաց. Ճար չկայ պիտի էրթամ. տեսնանք խենք Աստուած ևս ձիկ կու տայ, ևս ինոր, ևս ուրիշ մարդ չեմ օրօխկի վէր ինոր։

Սիւդակ դէւն ասաց. Քանի որ դու պիտի էրթաս՝ ուրիշ մարդ չես ճանպխի, բե ասեմ թէ ինչ անելու ես։ Ասաց՝ եվ կը խասնես սարի մը վէրէն, էնդեղ չինարի ծառ ըմ պիտի տիսնաս, էն ծառին էլ կապած աղչիկ ըմ, էն տեսակ խուրնի խրեղէն աղչիկ ըմ, որ մարդ չուտի, չխմի. յա ինոր իրեսն իրիշկի։ Էսա էլաւ

տաս տարի, որ Զանփօլադ էն աղչիկ փախցուցիր ի. ամեն աղչիկ ինոր չի սիրի. ապա կասի ինչ ժամանակ որ դու կառցար սպանել Սասնոյ Դաւիթն ու Մհէր՝ էն ժամանակ քե կառնեմ, թէ չէ՝ չիմ առնի։

Պիտի ասես թէ՝ էն աղչիկն ինչ կիտի թէ վէր աշխրիս Դաւիթ եա Մհէր կան. կամ թէ նոր պիտի էլնին. կիտցած էլնէս որ էնիկ էրազ ժի տիսե. էն էրազի մէչ ինոր ասեր են թէ մի վախէնայ. շատ կնաց, քիչ մնաց, Աստծու խրամանէով Դաւիթ անուշով մէկ ըմ պիտի էլնի, ու Զանփօլադն սպանի, քե էլ ազատի ինոր ձեռնից։

Ճոչ Մէլիոն նորէն ինկաւ ճամպախ. շատ կնաց, քիչ կնաց, խասաւ սարի մը վէրէն. տէսաւ էն դեղ թագաւորական պանցր սարէ մը. էն սարի առջևն էլ՝ խաս պախչի մէջ՝ պանցրիկ չինարի ծառ ըմ. ծառին էլ՝ կապուկ խուռնի խրիղէն աղջիկ ըմ։

Ճոչ Մէլիոն կնաց, եկաւ էնդեղրանք պտոտաւ յաչ՝ ուր սրա կնդաւ էն աղջկան մօտ էրթալու։ Աղջիկ եվ տեսաւ Մէլիոնին՝ շատ զարմացաւ. ասաց. Ծօ մարդ Աստծու. խաւքն ուր թիւեորով, օձն ուր պոռտով չէր կանի գալ ըստեղ. դու ինչվա էկար։ Կէլնի՞ թէ՝ դու Դաւիթն ես։

Չէ. ասաց Մէլիոն. ես Դաւիթ չիմ. ես ուրիշ ժամանակ էլ իկեր եմ ըստեղ. ամեն եա ըստեղ չեմ տիսե. էն ինչվա էլե որ դու իկեր ես ըստեղ։

Աչէիկ ծանդր խուզից ըմ խանեց, ասաց. Ախ. էլ մի խառցուցի. անօրէն Զանփօլադն էկաւ մեր երկիր իմ խօր վէրէն կռիւ. էն ժամանակ ես թագաւորական խաս պախչի մէջ կը պտոտի. մէկ էլ անկարծ էկաւ. ձիկ առնել ու փախնել մէկ արաց. իպի ըստեղ, էսա էլաւ տաս տարի ի որ ըստեղ կը տանջուիմ էսա անօրէնի ձեռ։ Ամեն կիդցած էլնէս, ասաց աղջիկ, որ Զանփօլադ ըստեղ չի. ապա կնացե սև սար. չիւնէի ինոր սովորութին ի՝ որ տարին մէյդիր էրթայ էնդեղ ուխտի, քառասուն օր էնդեղ կը մնայ՝ ուր ուխտ կանի, վերջ կը դառնայ։ Էսա էլաւ եռասունէւինն օր ի որ կնացիր ի. մէկ օր ի մնացե որ հդ դառնայ։ Մէկ էլ քե ասեմ՝ որ ինոր զօրութին որ կայ՝ սև եզան ըմ վէրէն ի. էն եզ եվ խէծնի, էլ կը դառնայ ամբողջ. կերթայ յըմէն աշխար կը պտըտի. աւերութին կանի. էն մարդ չի կանայ կայնի ինոր առջև։ Ինոր խամար կիտնաս թէ վով որ աշողի էն ևղն սպանել՝ էն ժամանակն ի որ էնիկ ալթ կէլնի։

Էսօրեր Մէլքոնի կնկ՛ան Սանդուխին տղէ մէլ էլաւ, շոտըմ էն դեղէն թուղթ ըմ գրեցին տուին ֆամոն. ֆամին իպի խասուց ուր խօր Ճոչ Մէլիոնի ձեռ։ Մէլքոն եվ կարդաց թուղթ, խաս-

կըցաւ որ ուր լաճ ըմ էլ էլե. անուն դրեր են Դռալ Վէրդէն. էն ժամանակ ասաց ինձին ուր. իշալլայ ուղուր ի էս պան։

Էն օր ինաց չուր իրիկուն. մէկ էլ Զանփօլադն էկաւ. եւ տէսաւ Մէլքոնին՝ ասաց. վայ դու խազար պարով հս էկե. էս կանդար օր ձր տեղն իր ինացե. թէ ձիկ բախտ տուեր որ էրթալուն պէս՝ Դաւիթն օրօկիր վէր ձիկ կուլ։

Մէլքոն ասաց. ես եմ էն ես ասաց Դաւիթ. դէ էլի մէյդան կռուենք։

Չէ, ասաց Զան փօլադ. սութ կասես. դու Դաւիթ չես. չիւնէի՝ առամորդին, ասաց, խում կաթ ի ծծե. ինոր էյթըպար չէլնի։ Աահլիւն պէս ձեռն իթալ տեխ չինարի ծառ. ճուփեց ինոր ճողեր ու Մէլքոն վէրուց էն ճօղերաց տակն իդիր, ծածկեց։ Էնդիւց եդ էկաւ, նստաւ աղջկան կուշտ ու ինոր խետ ինկաւ զրոց։

Ճոչ Մէլքոն էս պանի վէրէն էլ շկռաւ. չուր ուր աղօթքն էլ ժողցաւ ասելու, էն օր չուր իրիկուն շատ տառապաւ։

Աստղիկ թակաւոր որ ճոճացեր էր՝ վարժատուն կէրթէր. շատ առաջացեր էր, յըմէն էրկնուց աստղերուց կը խասկնէր ինչ որ ընցնէր դառնէր։ Էն օր էսա Աստղիկ թակաւոր աստղունքիս խասկցաւ թէ ուր խէր Մէլքոն շատ նեղութենի մէջ ի. չիւնքի տեսաւ որ՝ ինոր աստղ էն օր նղժորուկ էր։

Էս պան իմնալիւն պէս՝ կնաց մօտ ուր ախպէր Զէնով Օվան. պատմեց ինոր։

Ծէնով Օվան լսելիւն պէս ասաց. Դու ես մարիֆաթ խոջիցիր. հս էլ իմ մարիֆաթ խոջեմ. ասաց ու թռաւ սար մէկ։ Էնդեղ ինչ կանդար որ ծէն ունէր՝ էն պանցր ծէնով պօռաց ու ասաց աշխրի չորս կողմը դառնալով։

Է՛ խէրիկ. ինչի՞ մոռցար ես աղօթք.
Ինչ պատրաստեն քո սուրբ աղօթք։

Մհլէոն մէկ էլ անկարծ լսեց որ խորանթր ձէն ըմ դէպաւ ուր ակնջին. էն ծէնով խասկցաւ շոտ ըմ ուր արած սխալ։ Ուա, ասաց. հս իմ Ներսէսի աղօթք չեմ ասի էսօր. ինոր խամար ինկեր եմ էսա փորձանքի մէջ։

Մէկ էլ շոտըմ ինքզինք տնտղելով ասաց.

Կ'իշամ խացն ու կինին, Տէր կենդանին,
Մարութայ պանցր Աստուածածին,
Էն խաչ պատրաստեն որ խաչուի
Վէրը Սանասարի ալ թիւին
Թող ողչանց էլնի իմ թիւին,
Որ կոտրեմ էս ծառն ի ճղին,
Չէլնի դարպս էրթայ քիւլն ի քամին։

Էս աղօթքն ասելուն պէս, ինքզինք իրար իդուր, իրար տալուն պէս՝ էն ախագին խասդ ծառ կոտրաւ, էլաւ էրկու կտոր, ուր ձեռաց կապերն էլ շուտ ըմ ֆայուան. ազատուաւ։ Թակաւուրու գէրի աղջիկ էս պան տեսնալուն պէս ասաց. Ինչ կանդար որ դու ազատուար ես կապից, աման չես կանայ ախտի Ջանփոլադին. ինոր ախտող Դաւիթ մէնակ պիտի էլնի։ Մէնակ թէ ես գործն էլնի շուտ ըմ խասնել Սև սարի վէրէն էլած սև եզն սպասնել, որ Դաւիթի գործն աւելի խանգստանայ։

Մէլոն էլաւ Թռաւ ուր ձիու ֆամակ. քշեց չուր էն սև սար մէկ, էն սարի մէջ պաթլախ տեղ ըմ տէսաւ, էն պաթլըխից էլ սև եզըմ էլաւ ուր դէմ։

Մէլքոն եզ տեսնալուն պէս քալեց, ասաց ուր աղօթք, քաշից կէծակէ Թուր ու էն եզան փոր խոթեց. էն խրեղէն եզ կէտին փռեց։ Ինդիւց իզք նորէն քշեց ձին չուր Սասուն մէկ։ Ասաւ կէս ճանապախ՝ չխասաւ, մէկ էլ խապար տարան տուն թէ ճոչ Մէլոն էկաւ։

Էն ժամանակ Մսրայ Մէլիք ուր մարդերն օրօխկեր էր Սասուն Ջանդուխթ խաթիւնից ուր վէրկիքն ուզելու խամար։ Ջիւնէի էն Մէլիք էն զըմէն երկրին դէր էր էլի. Ջանդուխթի ժողովուրդն էլ ուր ռայաթ էր դառցուցե. Թող զէս Մարութայ Սուրբ Լուսաւածծնայ ժամտուն էլ ֆակեր էր խիմ խորիս էր արե։

Մէլոնի գալու խապար լսելուն պէս զըմէն գող ֆաղաք ինոր դիմաց կնացին. շատ ուրախութենով տուն պիրին. նստան կերան, խման, շատ ուրախութեն արին։

Էն ժամանակ Մէլոնի աչք եփ Մսրայ Մէլիքի մարդերաց երեսն ինկ'աւ՝ ասաց ուր մօր. Էս ինչ ֆէրիզ փայլէւան մարդեր են որ կը պատեն մեր երկիր։

Մէր խապեց ինոր ասաց. Մսրայ Մէլիք մարդ ի օրօխկե, ես թակաւորութեն կը շինախաւորի։ Ջիւնէի կը վախէնէր, չէլնի թէ Մէլոն քշէր վէր ինոնց։

Մնաց չուր առաւտուն. ճոչ Մէլոն կնաց վէր աղպրին ջիւր խմելու. էն դեղ տեսաւ մէկ խեղճ պառաւ ըմ որ փառչ ձեռ ակեր էր աղպրից ջիւր տանելու։

Էսա պառաւ եփ տեսաւ ճոչ Մէլոնին՝ ասաց. Պարի ես իկե. խազար պարի. դէ ասա տեսնանք թէ ինչ արիր Մսրայ Մէլիքի օրօխկաց մարդեկաց խետ։

Մէլոն ասաց. Ի՞նչ պիտի անեմ. ինոնք ֆէրիզ փայլէւան են, խուր են եկե մե։

Պառաւ գլօխ տարաւ իպե ասաց թէ հէ. օղօրմած խէր. ինչ պան. ինոնք իկեր են վէրկի ժողվելու. էն ֆանի մը տարուան

մէյդէղ. չիւնէի Սանդուխ խաթիւն ժամանակ էր ուզե Մէլիքից, չուր ուր տղէյներ ճոճանին, էն վէրկին տին. ինոր միտքն էն էր որ դղէյներ եփ ճոճանին, կուռեն ինոր խետ, ու չի տին էն վէրկին։

Ճոչ Մէլքոն էս խօսք լսելիւն պէս, շուտ ըմ խասաւ պունեց Մարայ Մէլիքի ժարդեր ու ինոնց զմէնի ատրճներ հաշեց, ասաց. Դէ կնացէք ձեր թակաւորուն պարև արէք, մէկ էլ ասէ ինոր թէ ուր ուղած վէրկու տեղ ես էս կանդար տարուան վէրկին կուզեմ ինորմից։ Թուղթ մ'էլ գրից, ինոնց իտուր, ասաց. Տարէք ձեր թակաւորուն որ պատրաստուի խեղ ձիկ կռիւ անելու, էն մարդեր եփ փօր փօշման ճանպախ ինկան, Մէլքոն էլաւ խէծաւ ուր ձին, կնաց Մարութայ սար աւ անելու։

Զուտ իրիկուն ուր աւից եփ պռծաւ ու տուն կը դառնէր, մէկ էլ կէս ճանպախ խապար տարան ինոր թէ էհ լաճ մ'էլե։

Եօթ ութ օրից վերչ եփ շատեր ժողվուան սարէն՝ էն տղի անուն դնելու, մէկ միւիւն չկառցան յարմար անունըմ դնել։ Մէկ էլ անկարծ էն խալիւոր մարդ էրէւաց. ասաց. Էդա լաճու անուն իւրիշ պան դնելու չէ, ապա իդոր անուն պէտք ի էլնի Ճոչ Մհէր։

Էն լաճու խամար կէրան, խման, շատ ուրախութեն արին. էնդիւց էտ Ճոչ Մէլքոն պատրաստուաւ՝ որ Մարայ Մէլիքի վէրէն էրթէր կռիւ։

Մէկ էլ շուրըմ Ծէնով Օվան ինան Դռալ վէրդէն դիմացն էլան՝ ասին թէ խայրիկ, պէտք ի որ մենք էրթանք վէր ինոր կռիւ, դու քո տեղ խանգիստ նստի։

Ծէրն ասաց. Տղէյներ, դիւք ինչէ պիտի էրթաք վէր ինոր կռիւ որ ֆէրհղ փայլէւան ասքար ունի, ինքն էլ չանկ ժդահար մը ժդահար ի, որ մէկ մուքիւն զաւթ չէ գայ։

Տղէյներն ասին. Դու ինչէ որ կէրթաս, մենք էլ ըսկուն, մէնակ թէ մե՝ սիլախ տուր, էլ իւրիշ պանի մի խառուե։

Շատ աղէկ, ասաց Մէլքոն, կնացէք մռէք սիլախի տուն, վէրիւցէք էն տեղէն ձեր ուղած սիլախներ, խեծէք ձեր խամու ձիանքն ու կնացէք։ Մէնակ թէ ձե խրատըմ տամ, էն խրատին խօրօտ մտիկ արէք, չիւնէի դիւք ճնճղուկ դանելու խամար չե որ կէրթաք։

Ասաց. Եփ կերթաք, կէլնէք Մարութայ սարի վէրէն՝ էն տեղ աւէրակ ժամատուն ըմ կայ, էն ժամատան մէջ կը կայնէք, ձեր աղօթք կանէք ու էն տեղ կը պառկէք կը քնէք չուր առաւտուն, ապա կինէք ճանպախ։ Էն տեղէն քիչ մ'էլ կը զադանաք, չէք զադանայ, ճանպախի վէրէն աղպիւր ըմ կէլնե ձեր դիմաց, էն աղ-

պրի վէրէն կը նստէք, կը լուացուէք, կուտէք ու կը խմէք, ըսկուն էլ ձեր ձիանէ կը լուաք ու ինոնց կը խմցուցէք, էն կիշեր էն տեղ կը ինէք, առաւտուն վեր կէլնէք, կը քշէք ձիանէ չուր փրէ պաթման մէկ։ Կիտցած էլնէք որ էն կարճնջով դէս մեր անորն ի, դէն էլ ինոնց անորն ի։ էն տեղ մէկ խալիւորըմ պիտի էրէւնայ ձեր աչքին։ էն ժամանակ դիւք շատ պիտի ծարւնաէ. էն տեղ շատ անուշ աղպիւր ըմ կայ. աման ինչ կանդար որ ծարւէնաէ՝ սախկըն էն աղպրից չիւր չխմէք։ էն խալիւոր կառնէէ խեղ ձե, կերթաէ. ճամպխու վէրէն իւրիշ աղպիւր մ'էլ ռաստ պիտի գայ, էն ժամանակն էլ ինչ կանդար որ ծարաւ էլնէք, նորէն չխմէէ. չուր էն խալիւոր ձե իզին չի տայ խմելու՝ չխմէէ։

Էսա խօսքերէն վերչ՝ էն էրկու ախպէր քշեցին ուրենց ճամու ձիանէ ու թռան ճամու պէս։ Շատ կնացին, էիչ կնացին, խասան Մարութայ սար, էնտեղ ուրենց խօր ապսպրածին պէս կերան, խման, լուացուան. կիրիցուցին ու խմցուցին ուրենց ձիանք, ու ինկան էն տեղ ինան չուր առաւտուն։

Առաւտուն թէ ուրենք, թէ ձիանք էն աղպրի ջրի քարսմաթով ֆէրեզ փայլէւան ու խրեղէն դառցած՝ ճանպախ ինկան. քիչ վերջ խասան Փրէ պաթման, աման ըսկուն ին ծարւըցէ որ էլ դաղաթ չունին առաջ էրթալու. էն ժամանակ անկարծ խալիւորն էլաւ ինոնց դիմաց, եփ խասան աղբրի վէրէն, Ջենով Օվան էն խալիւոր տեսնալուն պէս՝ շոտըմ թասըմ ջիւր իլեց աղպրից իդուր ինոր. էն էլ խմաւ ու օխնեց ինոր ու ասաց. Ձեր ձեռ վեր ձեր դիւշմնին պան։ցր ըլնայ, էս խօսքից վերջ աներևութացաւ։ Աման ուրենք չխմանն։

Էն տեղ էրկու աղբէրներով թուղթըմ գրեցին տուին քամուն, քամին տարաւ Մսրայ Մէլիքին, էն թղթի մէջ գրուկ էր թէ պատրաստ կաց կո խասանք։

Մսրայ Մէլիք թուղթն առնելուն պէս՝ կուու պատրաստուեթեն տէսաւ։

Էրկու աղպերներ շատ կնացին, էիչ կնացին, խասան չուր Մսրայ ֆաղաք, նստան տեղըմ որ սահաթըմ մէնակ զատն էր ֆաղքից։ Մէնով Օվան ու Դռալ Վէրգէն մտածեցին՝ ասին. ասին. Աղէկ ի որ առաջ ժարդ օրօխկենք ֆաղաք ու էլած չելած խասկնանք, ապա էրթանք կռիւ։ Վերջ թուղթըմ գրեցին օրօխկեցին Մսրայ Մէլիքին, ասին թէ պատրաստ կաց. էլի մէյդան, կռուելու խեղ մե։

Մսրայ Մէլիք պատասխանեց, թէ շատ աղէկ. էկէք. ես պատրաստ եմ։

Մսրայ Մէլիք շատ զօռալա ֆէրեզ փայլէւան մ'ունէր, ինոր անուն էր Կուզպայտեն. էսա Կուզպայտեն ձի մ'ունէր որ հօթ

ոանէն էր։ Ասոնք թէ էսա կուզպայտեն ինչ կերպով էսպէս ֆէ-
րիզ փայլէւան էր էլեւ

Էս մարդ տղայ ժամանակ օրըմ ծովու պուլըր պտտելուս՝ մէկ
էլ էն դեխէն նախիրըմ կը տիանայ որ էն դեղ կարածայ, էն
նախրի մէչն էլ կը տիանայ կարախ մը, որ ծովու ափ պառկած
ծնելու վէրայ էր։

Ինչ հաբ էն կարախ ծնաւ, ուրթ ոանէն էուռակըմ ծնաւ, ա-
ման չումէն էուռակ տուն խասուցին, մոչիներ ինոր մէկ ոտ կե-
րան ու միաց հօթ ոտ։ Էս կուզպայտնի խէր տղակուրթ նախրորդ
էլնելու համար, դիտէը թէ էն ծովու մէչ խրեղէն կէր, թէ էն
խրեղէն ևի ծովափ կելնէր ծնելու՝ պէտք էր որ ինոր ծնած քու-
ռակ էն ծովու ջրով լուին որ մոչիներ չուտեն։ Աման էս պանից
խապար չունէր կուզպայտին, որ էն ծնած քուռակ լուէը ծովու
ջրով։

Ապա ինչ որ ի, ասաց ինոր խէր, էսա ձին նորէն խրեղէն
մի, վով որ էս ձիուն տիրելու էլնի, էնիկ ֆէրեզ փայլևան կը
դառնայ։ Մէկ էլ ապսպրեց ուր լաճուն որ էն ձիուն իւրիշ պան
չկիրիցուցի, ապա մէնակ թիւզ ու խմոր։

Շատ չէաշեց ինոր խալիւոր խէր մնուաւ, կուզպայտեն շատ
աղէատ էլնելու համար չկառցաւ թիւզ խմոր կերցուցե. ապա
հանի մը շապաթ խոտ, գարի կերցուց։

Էն ժամանակ Մարայ Մէլիֆ առեց ուր ասքար, էլաւ դաշտ
թալիմ անելու համար։ Կուզպայտին եր էս պան տէսաւ, շուտըմ
խէձաւ ուր հօթ ոանէն ձին, կնաց Մէլիքի ասքրի խետ։ Դաշտ
խասնելիւն պէս մէյդան արաց. յըմէն ձիաւորից էլ առաջ ընցաւ.
ըսկուն որ մէկ ձիաւորն էլ չկառցաւ խասնի ինոր էուռակին։

Մարայ Մէլիֆ ևի տէսաւ՝ շատ ուրախցաւ, ասաց զարմանա-
լով. Էս ինչ զարժանք ի. հօթ ոանէն ձի վռիվ էր տիսե։ Շուտըմ
ուր մօտ կանչեց Կուզպայտին ու խառց փորձ արաց էն ծիու
համար. ասաց թէ էս ինչ չէնէւէր ի, որ ոչ ծիու կը նմանի, ոչ
եզան։

Կուզպայտին պատմեց ինոր ըվէն էլածն ու չէլած ու ա-
սաց. Պէտք էր որ էս ձիուն թիւզ ու խմոր կիրիցուցի. աման
աղէատ էլնելիւս համար չկառցայ, թէ չէ՝ էն ձին էրկու մկա-
ւան չափ աւելի աղէկ պիտի էլնէր։ Էն ժամանակ թակաւոր վէ-
րիւց, ասաց. Աման կիտես, Կուզպայտին. առ քե էսա կանտար
փարայ, ու կնա ըստիւց հաբ էո խօր ապսպրածի պէս թիւզ,
խմոր կերիցու էտ ձիուն. մէկ էլ կիտցած էլնես որ էս օրից դու
իմ վազիրն ես։

Դառնանք Մէնով Օվանին։

Մարայ Մելիք ասաց Կուզպայիտինին՝ թէ կիտցած էլնես որ Սասունից էրկու խատ կղրիճ ֆէրեզ փայլէւան են իկե, խեղ ձիկ կուռել կուզեն, դէ քե տիսնամ, էրթաս վէր ինոնց կռուես. ըսկուն անես որ մինք ամօթով չէլնենք աշխրի մէջ։

Կուզպայտին ասաց. Գլխուս վէրէն. առեց ուր խետ Էանի մը խարիր խատ ֆէրեզ վայլէւան ու թռաւ ուր եօթ ոտնէն ձիու քամակ, քշեց էն Սասնայ կղրճնելուց։

Եփ ինոնց մօտ խասաւ՝ բարևցնայ էլաւ ինոնց խեղ. մէմէկու էէֆ խառցուցելուց ետք պան էկաւ կռուելու։ Էն ժամանակ ասին դիր մէլնենք ծիւաւորի կռիւ անենք։ Ինչ կանդար որ Կուզպայտինի ձին խրնդէն էր՝ աման ինք կռապաշտ էր, առանց Աստուած կանչելու կռիւ կանէր։

Աման Զէնով Օվան ու Դռալ Վէրգէն աստուածապաշտ էլնելու խամար՝ ասին ուրենց Ներսէսի աղօթք, ապա էլան մէյդան։ Ինոնք էրկու դիր կնացին էկան թէ չէ, էլ Կուզպայտինի ձին դադրաւ քուռկու ճալալու առջև։ Շուտըմ Դռալ Վէրգէն քշեց ուր քուռկու ճէլէլին Կուզպայտնի վէրէն, խասնելուն պէս իզարկ ուր թոփուզ ու Կուզպայտին էն սահաթին ձիուց տակ իպե։

Կուզպայտին ասաց. Ես էլէ տղայ եմ, իմ ձին էլ թէզէ ի. ես չեմ կանա կայնի ձեր դիմաց։

Վէրգէն էլ ասաց. Եփ դու չես կանա՝ օրօխկի Էո թակաւոր կանչե որ դայ կռուի։

Կուզպայտին ասաց. Ես որ չկացայ վէր ձե, էն իսկի չի կանար կայնի ձեր դիմաց։

Էն էրկու ուվապէրներն էլ ասին. Քանի որ չէք կանայ կռուի խեղ մե՝ պէտք ի որ մե թապի էլնէք. Սանասարից վերջ էլած զըմէն վէրգիէն էլ կրկնապատիկ տաք. մէկ էլ Մարութայ պանցը Ասպածածնայ ժամ, որ Էակեր էէ, առչուան պէս շինէք ձեր փարով։

Կուզպայտին խրաման առեց ու թակաւորու մօտ կնաց, ինորմից խառցում անելու խամար թէ ինչ կասի։ Թակաւորն ասաց թէ ես էրկու դիր խեղ ինոնց մէյդան արի թէ չէ, մէկ էլ թօփուզըմ զարկին ձիկ ու զիկ իմ ձիուց տակ պիրին, էլ կարելի չի որ մենք ինոնց դիմաց կայնենք։

Թակաւորն ասաց՝ թէ մեր գրեանց մէջ գրուկ ի, որ Սասնայ կտրիճներ մե պիտի ախտեն, քանի որ իսկնայ ի գրուե մեր ճակատ, էլ էն գիր չաւիրե, կնա, ինչէս կիտես ըսկուն արա։

Կուզպայտին շուտըմ ետ դառնաւ էն էրկու ախպէրներուց մօտ. ընդունեց էնոնց խօսքն էկաւ։

Էստուց եղ Զէնով Օվան ինան ուր ախպէր Դռալ Վէրգէն թռան ուրենց ձիերաց քամակ, ինկան ճանապախ, խասան սարիմը

պուխ չորս ճանպխապէրան՝ տէսան որ էն տեղ 40 ախպէր դէւէր նստեր են, խաց կուտեն, սեղան քաւսուն կանթէն ուրենց առջև դրած։ Ջիւնքի Մարայ Մէլիք ինոնց թային էր կապե։ Ինչ որ Աստուածուքեն ստեղծեր էր, էն սեղնի վէրէն կէր. չուր եօթ տարուան կինին էլ կը կնդուէր էնտեղ։

Ըսոնք եվ տեսան Սասնայ Ջուխտակ կռիճներ, շոտ ըմ ինոնց առջևն էլան, ձիուց իջուցին, սեղան նստցուցին։

Էն Քաւսուն դէւեր ուրենց Թրեր, չէդած ին սեղնի տակ դրեր են, որ դոպու պէրեն, անկարծ սպանեն էն էրկու ախպէրներ. ինչի որ կիտին թէ ինոնք ախպէր են Մարայ Մէլիքին։ Մէմէկ ճոչ աննով կինի էլ էն ախպէրներաց առաջ դրեր են որ խմցուցելով սարխոշցուցեն ինոնց։

Էրկու ախպէրներ միամիտ կերպով նստան, կէրան էն խաշլար պարին ու խմեն էն եօթ տարուան կինին. ըսկուն որ քիչ վերչ աղեկըմ սարխոշցան ու էն տեղ ինկան չուր առաւտուն խեռլուկ ննացին։

Էս ժամանակ Աստղիկ Թակաւոր խեղ ճոչ Մէլէոնին յա աստղերաց կիրիշկին՝ ընոնց յալ խասկնալոս խամար։ Մէկ էլ Աստղիկ Թակաւոր իրիշկից, տէսաւ որ էն էրկու ախպէրներաց աստղիր շատ նղժուեր են։ Շոտ ըմ ասաց Մէլքոնին. Ախպէրներ շատ նեղութնի մէջ են։

Ճոչ Մելէոն էս խոսք լսելուն պէս վազից խէծաւ ուր քամու ձին, քշեց չուր սար մէկ։

Քանի որ էն էրկու ախպէրներ ինկեր են խեռլուկ, Քաւսուն ախպէր դէւէր ինոնց մօտ կայներ են ու կաւեն մէմէկու դու զարկ. էն կասէր՝ դու զարկ. մէկն էլ կիրիշմիշ չէր էլնի զանելու։

Էն ժամանակ Դռալ Վերգենի խելէ կու. գայ գլուխ, կը Թռնի վեր. շոտ ըմ մէկ ձեռնով կը վէրուցի սեղան պարկուքնով կասի. Ծօ քաւսուն դէւ ախպէրներ, էս ինչ սեղան ի որ կինի չկայ։ Եվ էն սեղան դէն կը շփուտի, մէկ էլ կը տիսնայ ինոր տակ քաւսուն Թրեր դրուած։ Շոտ ըմ էն Թրերէն մէկ կառնի կը խասնի վէր քաւսուն դև ախպէրներաց, ինոնք զըմէնն էլ կսպանի, մէյմէկ կողմ կը Թաւալցուցի։ Ասա ուր ախպօր Ծէնով Սվանին էլ ծէն կու տայ։ Օվան եվ վեր կելնի ու կը տիսնայ էն Քաւսուն ճէնդկներ, որ ուրենց արնի մէջ կը լողան, կասի Ծօ վէրգէն. էս ինչ ես արե առանց ձիդ։ Ասա էն 40 Թրերաց կիրիշկի կասի, յա, էս Թրեր պատրաստեր են սեղնի տակ որ մե սարխոյշուցելուց սորա սպաննեն, աղէկ արիր որ շոտ դաւրանմիշ էլար։

Ըսուց ետ շոտըմ էն Ջուխտակ կռիճներ Թռան ուրենց

ձիերաց ֆամակ ու էշեցին։ Էն դիշեր չուր աղօթքնի դէմ կնացին. խասան դաշտի մը մէջ։

Էն ժամանակ ճոչ Մելքոն էլ էն մէկկէլ կողմէն իկեր էր ու էն դաշտի մօտքեր խասեր էր, էսիկ եփ տեսաւ զատունց էն ջուխտակ, ասաց ինքն ուր. էն մէկ ձիու քելք կը նմանի մեր քուռկու ճէլալու քէլքին. կայ չկայ Թշնամիք մեր դղէյներ սպաններ են. ինոնց ձիանքն էլ խեճած վէր մե կռուելու կուգան։

Շուտ ըմ պանձր ձէնով պոռաց ասաց. Հանչ էկայ որ ձեր խաց տամ ձեռ։ Ասաց ու թուփուզն օլօխնեց կէս սահաթուան ճանապխից։

Տէսաւ որ խադ ըմ էլ ինոնք օլօխնիցին, աման ինոնց թալած ուր թալածից աւլի զոռով էր։ Էն ժամանակ մէկ ձէնով պոռաց ու էսա տաղն ասաց.

Շատ ջիւր եմ տիսե, շատ ջրերն եմ ընցե.
Էսօր երկու պստիկ առուի ջիւր եմ տիսե.
Զարէս ի կտրե։
Շատ ծով եմ տիսե, շատ ծովերն եմ ընցե,
Էսօր երկու պստիկ կէօլ եմ տիսե.
Զարէս ի կղրե։
Շատ խղեղ եմ տիսե, շատ խղեղ եմ ընցե,
Էսօր էրկու պստիկ աղբիւր եմ տիսե,
Զարէս ի կղրե։
Ես եմ ճոչ Մելքոն Սասնայ թակաւոր.
Շատ կտրիճ եմ տիսե, շատերն եմ սպանե,
Էսօր էրկու պստիկ տղայ եմ տիսե.
Զարէս ի կտրե։

Ձէնով Օվան էս ձէնն առնելիւն պէս՝ պոռաց ու ասաց. վայ, հայրիկ, դու ես, ես ֆե մեղայ, չի կիտե, ասաց ու վազեց շուտ ըմ ուր խօր ոտն ինկաւ։

Էն ժամանակ ճոչ Մելքոն խասաւ դեխ ուր դղէյներ, ինոնք գրկեց աչից ու ձախից, պագից իրեաներ, շուտ ուրախցան վէր մէմէկու։

Էն տեղ շուտըմ բացին սուֆրէն վէրէն դրան Աստծու խաղար բարիք խետ եօթ տարվան կինուն, կէրան, խման, շատ ուրախութեն արին, ապա վեր ելան ու դարձան ֆաղաք։

Ճոչ Մելքոն շատ խալիւորցած էլնելու խամար կանչեց ուր տղէյներ ու ասաց ինոնց, թէ ես իմ չափն առեր եմ, էսօր կամ, վաղ չկամ, եփ կը մեռնեմ, իրեք ախպերներացդ որն որ իմ տեղ թակաւոր պիտի էլնի, անպատճառ էսա ժամ շինի։ Քուռկու ճէլալուն էլ շատ շախ ու պախ տաֆ։ Ձեր դիւշմի խադ կալպիւ-

թեն չանէք, ապա կտրճի պէս կուէք խեղ ինոնց։ Էն տղէյներն էլ պսակեց. հօթն օր, հօթն կիշեր խարանիս արաց, աշխարաժողով էլաւ, կէրան, խման, շատ ուրախութեն արին։

Վերջ ուր կնգան Մանդուխին էլ ասաց. Ջիւր տայդու որ լոխկնամ որ ճաշուց առնեմ։ Կնիկ եվ լոխկցուց ինոր, տեսաւ որ ինոր աջ կողմ նշխըրխի մը պէս սև նշանըմ կէր։ Էն ժամանակ կնիկ դառձաւ, ասաց. Ծօ մարդ, էս ինչ սև նշան ի վէր էո ճանդկին։ Մէլէոն ասաց թէ եվ կնացի Ջանփօլադի մօտ, ինոր պախտ տուի որ մեր տղէյներաց մէկն օրօխկեմ վէր ինոր կուիւ. էն տուտ էրդման խամար էն օրից չուր էսօր իմ մէկ կողմ սիւցեր ի։

Ժամանակ մէլ ապրելուց ետ մնաւ ճոչ Մէլէոն։

Տղէյներն էկան, ամէն քաղքցիք էնտեղ թափան, շատ լացին ու ողբացին. տարան թաղիցին։

Էս ժամանակ Աստղիկ թակաւորն ասայ Ծէնով Օվանին. թակաւորութեն քե կխասնի, քանի որ դու ես մեր ճոչ ախպէր։

Օվան էլ ասաց. Ֆօ անուն վէրէդ ի դաթի, պէտք ի որ դու թակաւորես։

Հէ, ասայ Աստղիկ, ես դաթի թակաւոր եմ, էլ նորէն թակաւոր էլնելու պէտք չունեմ, մէկ էլ որ ես ճօղուած եմ. չիւնքի օրըմ եվ կուու մէջ Սանասարի թօփուզ վէրիւցի որ թալի, ճօղուայ զօռից։

Վերջ ամէն մէյտեղ նստան խորխուրդ արին. ու կատար տուին որ Մհէրն էլնի թակաւոր։ Աման ֆանի որ էն տղայ ի էլէ, պէտք ի որ Ծանդութ խաթիւն թակաւորութեն անն չուր էն ճոճանայ։ Աւուր մէկ եվ Մհէր վարժատնից տուն կը դառնէր, տեսաւ որ տղէյներ ժողվուիր ին փօղան կը խաղան։ Էն տղէյներաց մէկ պստիկ թօփուզըմ չիներ էր, էն թօփուզով կուիւ կը խաղեր խետ ինկերներաց։ Էս պան Մհէրին շատ դիւր էկաւ, ասաց. Ես էլ կուզեմ խաղալ խետ ձեզ։ Էնտեղ չուր իրիկուն խաղալուց սորա եվ տուն դարձաւ՝ ասայ մօր. Մարէ, էլ չեմ էրթայ վարժատուն, ինչ որ ուսայ, էն էլ խէրիք ի։ Պէտք ի որ զի խամար մէյ խատ թօփուզ ըմ ինան նետուանեղըմ տաֆ. էրթամ սար աւ անեմ խեղ իմ ինկրներաց։

Մէրն ընդունեց ինոր խօսք, թօփուզ մ'ու նետուանեղըմ իտուր ինոր, էն էլ ֆանի մ'օր խեղ ինկրներաց խաղալուց վերջ ասաց. Ես պիտի էրթամ իւրիշ սարեր։ Ասաց ու էլաւ խէցաւ ուր ֆամու ձին, ինկաւ ճանպախ չուր դիմացի սարեր մէկ, էրթացած ժամանակ մօրաւ ճանպախից, էն կիշեր ւնաց դիւս։

Մէկ էլ անկարծ իրեմ ախպէր դէւեր ուստ էկան ինոր,

շոտըմ պաշլայեցին կռուել խեստ։ Մհէր շոտըմ հաշեց նեստուանեղ ու սպանեց էն էրկու դէեւը, մէկն էլ եարալու արաց, էն եարալու դէե փախաւ. Մհէրն էլ ինոր արնի իզով ինոր իտիւէն ինկաւ, խասաւ մէկ անվէրվէրի տեղըմ, հէրի մը մօտ։ Էն հէրի մէջ խուռնի խրեղէն աղջիկըմ տէսաւ, որ նստեր էր եարալու դէեի մօտ, կը սրպէր ինոր արուն։

Շոտըմ ի զարկ սպանեց էն դէե. աղջիկն էլ ուր թարք թալել ու փախնել մէկ արաց։ Խասաւ տուն, քիչ վերչ խարանիս արին էն աղջիկ պատկեցին վէր Մհէրին ու թակաւոր արին. իսոր խամար աշխարաժողով էլաւ. էկան շատեր կէրան ու խման, եօթն օր, եօթն կիշեր խարանիս արին։

Մհէր թակաւոր էլնելիւն պէս՝ ուր երկիր ամէն կերպով առաջացուցելու իտիւէն ինկաւ. քիչ ժամանակուան մէջ շատ առաջ տարաւ ժողովուրդ, իլա քի ասպածպաշտութենին շատ ոժ իդուր, ըսկուն որ ուր ամէն դիւշմիյներ պաշլայեցին վախենալ ու կորագլօխ էլան ինոր առջև։

Ուր թակաւորական սարի առջևն էլ խաս պախչէ մը տնկել խոուր, էն պախչէն իլից Աածու ստեղծած յրմէն ծառ ու ծաղկունքով, խաւքերով ու ճանաւարներով։

Ըստիւց եղ ժողվեց ուր աէրներ նորէն ու կնաց կռիւ վէր Մարամէլիէին։ Եվ խասաւ ինոր երկիր խապար օրօխկեց էն Մէլիէին, ասաց՝ Եա էն ի որ պիւթիւն Մարըն առնեմ ըստրիս. Եա Սասուն ուր ամէն քաղքներով ու գեղերով էե տալ։

Մարայ Մէլիէ եվ էսա խօսք լսեց՝ շատ տարակուսանքի մէջ ինկաւ, ու մարդ օրօխկեց Մհէրին ժամանակ ուղեց։ Մհէրն էլ ընդունեց ու խաշուաւ էն տեղէն։ Իս ազեն ճուչ Մհէրի միտն ինկաւ յանկարծ թէ ուր խէր ժամանակաւ պախտ էր տուե Ջանփօլադին, որ ղինք օրօխկէր վէր ինոր կռիւ. ինոր խամար էլաւ խազաւ ուր էրկթէ խալաւներ, մէջք կապեց թուրըն կէծակին, խէծաւ քուռկու ճալալին, քշեց վէր Ջանփօլադին, որ ուր խէրն ազատէր սուտ ասելու մեղքից։

Շատ կնաց, քիչ կնաց, խասաւ Ջանփօլադի անոր, մէկ սարի մը գլօխ։ Ջունքի ժամանակ գարուն էր, ինոր խամար սար զրմէն խազարաւոր ծաղկներով ու աւերով (որսերով) լցուկ էր։ Էն ժամանակն էլ Ջանփօլադն էլ ուր մարդիկով մէկտեղ իկեր էր զօզան էն սարի վէրէն։

Ճօջ Մհէր ճանպխու վէրէն էն տեսակ ծարւցեր էր որ պէրան չորցիր էր, չիւնքի ուր երթացած ճանպխներուց վէրէն իակի չիւր չկէր։

Մհէր շատ նեղուելով եվ տէսաւ որ մուքն էլ կը կոխի,

շոտըմ էլաւ խէնձաւ ուր ձին, ինկաւ սար ու ձոր որ աղբիւրըմ կնտնի։ Ինչըմ վերչ Աածու կամեցողութենով խասաւ վէր աղբրի մը, աման տեսաւ որ ախագին դէնըմ գոմշու տիկըմ ջրով լցնը էր ու կայներ էր էն աղբրի գլօխ։

Մհէր պարև խոուր էն դէնին, ասաց. Կուզես որ էսա աղպրից պտիկըմ ջուր խմեմ։

Տէն ասաց. Էսա աղպրին Ջանփօլադի աղպիւր կասեն, ինորից զատ իւրիշի խրաման չկայ ջուր խմի էսա աղպրից։

Մհէրն էլ ասաց. Օղորմած խէր, էստեղ սար ի, Ջանփօլադն էլ զատն ի. էն ինչ պիտի իմնայ որ ես էստեղից ջուր եմ խմե։

Չէ, ասաց տէս, էնիկ մե էրդիւմ ի տուե ու պախապան ի կայնցուցե էստեղ որ ինչ ատեն օտար մարդըմ գալու էլնե էստեղրանէ, ինոր իմաց տանէ, չիւնէի էսա սասում սարերաց մէջ մէնակ էս աղպիւրն ի. էլ իւրիշ չկայ։

Մհէրն ասաց. Ախպէր Ջան, ես քեզնից յիւի կանեմ օր պտիկըմ ջուր տաս ձիկ քո խօր խոդիւն խմեմ ինեմ ճանպախ. ես վարձքի։ Մէ միւքիւն ճար չէլաւ խնդ էն տէւին, էնիկ կանմիշ չէլաւ իսկի։

Էլ Մհէրի խամբերութենն կդրաւ, շոտըմ խասաւ պռնեց էն տէս, ինոր ձեռ ու ոտ կապեց իդիր բարիմը տակ։

Էլաւ կնաց վէր աղպրին կուշտ ըմ ջուր խմաւ։ Էն դէս եվ խասկցաւ որ էն մարդ ուր խասկցած խոզածինեքէն չէր, ընոր խամար ինչ որ կէր, զըմէն էլ տեղնստեղ պատմեց Մհէրին։ Ասաց ինոր. կը տեսնես էս մեր դիմացի ճրագ, էնիկ մեր թակաւորի չադրի ճրագն ի. չիւնէի յըմէն տարի էս գարնան ժամանակ էն կու գայ ըստեղ զոզան, քէֆ ուրախութենն կանի։ Կիդցած էլնես որ էնիկ քո գալն իմնալուն պէս ծեղնից աւելի զօրաւոր դէս ըմ կօրօխկի ըստեղ, էնգամ ես հալ եաման ի։

Ջանփօլադ շատ աչկեց, ինչ աչկեց, տէսաւ որ ուր ջրպեր դէս չի գայ. էլաւ իւրիշ դէս ըմ օրօխկեց ընոր իդիւէն։ Էն դէս եվ էկաւ, տեսաւ որ մարդըմ նստեր ի վէր աղպրին, խրեղէն ձի մէլ թողե կալածայ, դէսն էլ ճոչ պալի մը տակ կը տյտըֆայ։

Էս ժամանակ պռռաց, ասաց. Էյ խոզածին, խաւէն ուր թիւով, օձն ուր պորտով չեն կանայ էստեղուանէ լալըտայ, դու ինչ ճասարաթով իկեր ես խասեր ես չուր ըստեղ։

Մհէրն ասաց. Էլպէթ էն մարդ որ իկե ըստեղ, ուր կիւվէամիշ էղիր ի։

Դէն ասաց. Ապա իմ ինկերն ուր է։ Մհէրն ասաց. Կօհան էնա ճոչ պալի տակն ի, թէ կանաս, կնա խան դիւս։

Դէն ասաց. Վայ դու վիվ ես որ ըտկնա պան կանես, դիու

չ՚ես կիդե որ ես Ջանփօլադի պաշ դէւն եմ, իմ առջև սարեր քարեր պիլա կը դողան, դու չ՚ես վախչնայ զիզնից։ Դու կայնի քե մէկ խատ գիւրզ ըմ զանեմ, որ խասկնաս թէ ես վով եմ, ասելուն պէս գիւրզ ըմ զարկ ճոչ Մհէրին։ Մհէր էս պան տեսնալուն պէս, շոտ ըմ խասաւ պռնեց գիւրզ. էն դէւին էլ շալմկեց, կապեց, եդիր էմէկէլ դէւու կուշտ։

Ջանփօլադ որ կերեր ու խմեր էր, ուր էզի խասուցեր էր շատ ծարուցեր էր, ամէն դախկին ջիւր կաչկէր որ խմէր։ Շատ աչքեց, քիչ աչկից, ոչնաւ որ էմէկէլ դէւն էլ չէկաւ։ Էն ժամանակ ինէն ուր մտածեց ասաց. կայ չկայ որ մէկ շատ զօրաւոր մարդու մը պատահել ինոնէ։ Ընոր խամար շոտըմ էլաւ խէծաւ ուր քամու ձին, քաշեց գըմէն ասքար ու կնաց տեխ էն աղպիւր մէկ։ Մէկ էլ տեսաւ որ ախագին սարի պէս մարդ ըմ նստե. էն ժամանակ ասաց. էյ խողածին, խաւէն իւր թևով, օձն ուր պորտով ճատարաթ չունի ըստեղրանէ լպրդալու, դու քինչ սրտով իկեր ես ըստեղ։

Մհէրն ասաց. ինչքե. զիզնից աւելի զօրաւոր մարդ չքկե ըստեղ իսկի։

Ջանփօլադն ասաց. Ա՚ա, շատ տարի առաջ Սասունայ երկրից Մելքոն անունով մէկ մ՚էլ էկաւ, որ տեսնալուս պէս գիւրզ ըմ զարկի ընոր ու պռնեցի, էն էլ ձիկ պախատ իտուր որ թողնեմ զինք, էն պայմանով որ երթէր ճոչ Մհէրն որոխկէր վէր ձիկ կռիւ, աման ուր խոսքի տէր չգտնաց։

Մհէրն ասաց. կո ես էն քո ասած ճոչ Մհէրն իմ, մկա իկեր համ վէր եե կռիւ, որ խասկնաս թէ իմ խէր ուր խոսքի տէր մարդ ի, դէ էլի իմ դիմաց, ինչ որ ձհունէդ կու գայ, արա։

Ջանփօլադ էս խոսք լսելուն պէս սարսափըմ զինէ կոխեց, ձիու ոտ թուլցաւ ախու, աման սութ ուրախութենով ըմ ասաց. վայ դու պարով ես էկե, խազար պարով, դէ էլե, էրթանէ իմ չադրի տակ. ուտենէ, խմինէ, չուր լիսնայ, էն ժամանակ տեսնանք թէ Աստուած որնւս կուտայ։

Զէ, ասաց ճոչ Մհէր, մեր ճոճանէ մե ըսկուն պատուէր են տուե որ դիւշմի առջևն էլնելուն պէս կուտենէ ինոր խատ. ես չեմ ուզի գալ քո չադըր։

Որ ըսկուն ի, ասաց Ջանփօլադ, էսա իմ էրկու դէւեր դիւս խան էս եարի տկէն՝ որ էրթան իմ չադըրից ուտելիէ, խմելիէ պերեն ըստեղ։

Մհերն ընդունեց ինոր խոսք, խանեց տիւս էն դէւեր, որ շոտըմ կնացին Ջանփօլադի չադրից խազար պարին պիրին էնտեղ։ Սուֆրէն կուռմիշ էլաւ, Մհէր ինան Ջանփօլադ նստան ուտելու։ Ջացից վերչ կարգն էկաւ կռուելուն։

Մհերն ասաց. Դէհ, էլի մէյդան. ինչ որ անելու ես՝ շուտով արա։

Չէ, ասաց Ջանփօլադ, բանի որ առաջ դու ես էկե վէր ձիկ, պէտք ի որ առաջ դու զանես բո իրեք դարպ, էնավ եդ թէ որ ես սաղ մնացի, Աստուած օղորմած ի, ախր հա՛ ձիկ կուտայ եա՛ քեզ։

Ջանփօլադի միտքն էն էր, որ էն ուր դարպ զանելուն պէս պռնէր ուր խօր նման էրդիւմ տէր ինոր, որ էրթէր Դաւիթն օրօխկեր վէր ուր կռիւ, չիւնքի ուր զարպ էն Դաւիթից պիտի էլնէր։

Էն ժամանակ Ճոչ Մհէր թռաւ ուր քուռկու ճալալու համակ, զադացաւ մէկ սահաթ կատար ճանապախ ու բառնուն կտրանոց գիւրզըմ էօլէօխնեց դեխ Ջանփօլադ։ Աման ոչինչ, էն գիւրզն ինչ կանդար որ էկաւ դիպաւ Ջանփօլադի գլխուն, ապա կիդես թէ էն ախագին գիւրզ պտըտուր ըմ էլնէր, որ իսկի էլ ցաւ չի տուր ինոր։ Ջանփօլադ շոտըմ վէրիւց ասաց. թէ հէ, էսա՛ ի քո Սաննայ կտրճներաց մարիֆաթ, չէ, ասաց, ըսկուն կէրէւնայ որ իմ զարպ Դաւիթից մէնակ պիտի էլնի։

Ճոչ Մհէր էրկու գիւրզ էլ իղարկ, ինոնք էլ հէչ։ Ջանփօլադին ասաց. Դէ մկա սրէն քոն ի, էլի դիւն էլ բո զարպ զարկ։

Չէ, ասաց Ջանփօլադ, ես քի պան չեմ անի, մէնակ թէ բո խօր պէս պախտ տաս ձիկ, որ էրթաս բո ախպէր Դաւիթին օրօխկես գայ վէր ձիկ կռիւ։

Հէր անճար մնալով պախտ իտուր Ջանփօլադին՝ որ էրթայ Դաւիթ օրօխկի։ Ջանփօլադն էլ խրատան իտուր էնոր որ շոտըմ ճանապախ ինկաւ։ Ճանապխի վէրէն շատ մտածման մէջ ինկաւ, ասաց. ես որ չկատցայ ախտել Ջանփօլադին, Դաւիթ բինչպէս պիտի ախտի ինոր։

Քանի որ էս մտածման մէջ առաջ կէրթէր, տուն էլ խաստաւ, նորէն շատ մռութ էր, իսկի ծաղր ուր իրես չէր իկե։ Էն ժամանակ Ծէնով Օվան մօտացաւ ինոր ասաց. Ախպէր ջան, դու իկեր ես, չես իկե, յա մտածմունքի մէջ ես, ասա խնճ, բինչ էլաւ, բինչ ընցաւ, բինչ ի պատճառ որ դու ըսկնայ մռութ ու մալու՛լ ես։

Ճոչ Մհէրն ասաց. Հէ ախպէրիկ, բինչ ասեմ. պան պանից էլիր ի, կնացի վէր Ջանփօլադին կռիւ, զարկի իրեք գիւրզ. աման էն գիւրզեր պարապ կնացին, ու ես ակամա ինոր պախտ տուի որ Դաւիթն օրօխկեմ վէր ինոր կռիւ. էս կէրպով կորագլօխ էլայ աշխարի առջև։ Ես որ չկարցայ վէր ինոր՝ բինչէս պիտի կռուի ու ախտի Դաւիթ, որ մօրից չէլե ալա։

Ծէնով Օվան ասաց. Չէ, ախպէր ջան, էդա կանդար էլ մա-

լուլելու չի, մնծ է զօրութեն Քրիստոսի. ինչ գիդես, պալէի ինոր ճակատ գրուկ ի որ ուր մախ Դաւիթի ձեռնով գայ։

Դառնանէ դեխ Մսրայ Մէլիքէ։

Մսրայ Մէլիք էն ժամանակ ժողվեց ուր ֆէրիզ փայլէւաններ ու նստաւ մանգլիս, ասաց. Սանսայ վէրկին տալու ժամանակ մօտացե, խաղնէն էլ էն կանդար փարայ չկայ։ Էն կանդար տուինէ որ կտրաւ վէր մե, էլ չուր ճրբ ինոնց վէրկի տանէ, աղէկ ի որ մարդ օրօխկենք, Մհէրն ըստեղ կանչենէ, ինորմից իմդա առնենք խապելիւթնով որ էլ վէրկի չի տանք ինոնց հի մեղնից զօրաւոր մարդ ըմ կուսի ինոնց խետ ու ախտի։

Էսա խօսքն ընդունուաւ, շոտ ըմ թուղթ ըմ գրեցին, տուին քամուն։ Էն թղթի մէջ գրուկ էր որ ճոչ Մհէր էրկու ամսու չափ ուրենց խուր էլնի։

Եփ էն թուղթ խասաւ Մհէրի ձեռք, շատ ուրախացաւ, ու էս պան ուր ճոչ մօր Ջանդուխթ խաթիւնին պատմեց։ Ջանդուխթ խաթիւն իրիշկեց աստղունէն ասաց. Ջէ, պէտք չի որ էրթաս. աստղերն ըսկուն նշանց կու տան որ պիտի վնասուես էրթալով։ Ջիւնքի թէ որ էրթաս, դաւնալէդ քառսուն օր վերջ պիտի մեռնես. աման թէ որ չէրթաս՝ չես մեռնի։

Մհէրն ասաց. Ջէ, ջնասուեմ, չջնասուենմ պիտի էրթամ. ինոր խօսք կոտրել չէլնի։

Ջանդուխթ խաթիւն ինչ կանդար որ խնդրեց, ճար չէլաւ. էնիկ մտիկ չարաց ու ճանպախու պատրաստուխթեն տէսաւ։

Ջանդուխթ խաթիւնի ճար կտրաւ. էլաւ կնաց Մհէրի կնկան մօտ, էսս բան ինոր այտնելու խամար։

Մհէրի կնիկն ասաց. Էսա կէլնի չորս ամիս որ ես տղով եմ։ Էսա խօսք քիչ ըմ Ջանդուխթի սրտին խամբերուխթեն իտուր։

Ճոչ Մհէրն առնց ուր ֆէրեզ փայլեաններ ու ինկաւ ճանպախ, խասաւ ճամպխի կէս չխասաւ, թուղթ ըմ պրնց Մսրայ Մէլիքին թէ ես խասայ։ Մսրայ Մէլիք իմնալիւն պէս ուր ֆէրեզ փայլեաններով ինոր դիմաց կնաց։

Մհէր եփ խասաւ շատ պադուով առին կնացին թագաւորու սարէն. կէրան, խման, շատ քէֆ արին։ Եփ իրիկուն էլաւ, Մէլիքն ասաց Մհէրին. Էսա կիշեր ես իմ եաթաղ քե իքրամ կանիմ, կնա պառկի մօտ իմ կնիկ։ Ջիւնքի ինոր միտքն էր որ ճոչ Մհէրի սերմն ուր ցեղին ընցուցի, էն կերպով ինոր զօրութեն պայսի։

Մհէրն ընդունեց ինոր խօսք, էն կիշեր ինոր եաթաղ կնաց, քառսուն օր էսպէս արաց։ Էնդիւց ետ ուր մարդկով մէյտեղ ինկաւ ճանպախ, նորէն Սասուն դառցաւ։

Դառնալիւց քառսուն օր վերջ աղորդ որ Յանդուէթ խաթիւնի ասածի պէս ինք մեռաւ։ Ինոր մեռնելուց ետ ուր տեղ թակաւոր էլաւ Զէնով Օվան։

Ճոջ Մհէրի մախից քառսուն օր վերչ էլ խապար էկաւ թէ՝ Մսրայ Մէլիք մեռաւ. ինոր տեղն էլ ուր կնիկ թակաւորեց։

Էն ժամանակ Մսրայ Մէլիքի կնիկ էլաւ կոիւ վէր Զէնով Օվանին, ախտեց ինոր ու վէրկէ կապեց, եօթ տարուան վէլխին էլ առեց ինորմից։

Մհէրի կնկան ինն ամիս որ թմբմաւ՝ լաճմ իպէ ու էն լաճու անուն Դաւիթ դրին։

Մսրայ Մէլիքի մախից քառսուն օր էլ վերջ ինոր կնիկ տղէ ս'ի բե. էն տղի անունն էլ ուր խօր անունով Մէլիք դրին։

Դաւիթի քառսունէ որ թմբմաւ, ինոր մէրն էլ մեռաւ. խոր խաթար Զէնով Օվան Դաւիթ կօնտախ մէջ փաթիւթեց, օրօխկեց մօտ Մսրայ Մէլիքի կնիկ, որ շախէր, պախէր չուր ճոճանէր։ Մսրայ Մէլիքի կնիկ Դաւիթին էլ ծիծ իտուր խետ ուր տղին, քանի որ էն էլ ուր տղի պէս Մհէրի սերմն էր։ Աման Դաւիթ ճանպախի վէրէն եօթ կիշեր եօթ ցէրէկ անծիծ էր մնացե. մէնակ թէ էն ֆէրիզ փայլէանններ որ էն տարան՝ ծծի տեղ գաղպին կուտին ինոր, չուր խասուցին տեղ։ Մսրայ Մէլիքի կնիկ իրէ տուլ Դաւիթին ծիծ իտուր խետ ուր տղին, չուր ծծից կտրեց։ Եվ էն տղէյներ էլան եօթ տարեկան, Մսրայ Մէլիքի կնիկ ուր տղէն իտեր վարժատուն, Դաւիթին չիտեր։ Ինոր խամար Դաւիթ կինէր դէս դէն կը խաղէր խեղ փողնի դղէյներաց, էն պատճառով ինք մնաց անկերթ, էլաւ փողնի տղայ։ Աւուր մէկ ուր Մսրայ Մէլիքի տղէն ինան Դաւիթ մէյտեղ ճան կը խաղին, Դաւիթն ինոր տարաւ. էն պատճառով Մսրայ Մէլիքի տղէն շատ սրտխաւ, ասաց. Վայ ես Մսրայ Մէլիքի մը տղայ էնիմ՝ դու ձիկ տանիս. ինոր խամար շոտըմ էլաւ կնաց մօտ ուր մէր գանգատ։

Մէր եվ տէսաւ, շատ գօրովրեց ինոր ճորօվ խանդարդաւ։

Դաւիթ ուր խաղի իտէն ինկեր էր. Մսրայ Մէլիքի տղէն էլ ուր կարդալու խետն էր։ Ինոր խամար Դաւիթ խաղից վերջ ինկաւ աւ անելու իտիւէն։ Ճան խաղալով քանի մը կուռուշ իսկեց ձեռ. էն փարէն տարաւ մէյ խատ պտիկ նետուանեղըմ գնաց, ու էն նետուանեղն իթալ քամակն ինկաւ դէս ու դէն, ինորով ճնճղուկ կը ղանէր. էս պատճառով շատ ուսթա նշանդար էլաւ։

Էս պան տեսնալով ինոր ախպէր ինքն էլ ուզեց Դաւիթի պէս ճնճղուկ ղանել. ինոր խամար կնաց ուր մօր մօտէն նետուանեղմ առեց. կնաց աւ անելու։ Օրըմ եվ Դաւիթի խետ ճնճղուկ

զանելու էլան՝ էն որ Դաւիթ 10—20 խատ իղարկ, ինք մէյ խատ էլ չկառցաւ զանէր։

Մսրայ Մէլիքի տղէն նորէն նեղացաւ ու ասաց. Ճանի մէջ տարուայ խէրիւ չէր, աւի մէջ էլ Դաւիթից եդ մնացի. ինչէս պիտի էլնի ապա իմ հալ՝ եփ էսա եթիմ ճռճանայ. իմ հալ եաման ի, ասաց ու լալով նորէն կնաց մօտ ուր մէր գանգտեց, եփ Դաւիթ ուր զարկած ճնճղկներ խպառտ խպառտ մօր առջև կը թափէր։ Դաւիթ եփ էլաւ դիւս Մսրայ Մէլիքի տղէն ասաց մօր. Ես ինչ պիտի անեմ, էսա եթմու խետ, էնիկ ձիկ ախպէր չի, ապա իմ դիւշման ի։

Ջէ, ասաց մէր, արիւուդ մեռնեմ, մի պարկանայ. կէլնի որ օրմ՝ էլ դուս կաջողես։

Իսոր խամար Մէլիքի տղէն ասաց ուր մօր. Ջէ, էլ ես վարժատուն չեմ էրթա, ինչ որ ուսայ, էն էլ խէրիւ ի, ըստուց ետ կէրթամ ես էլ ֆէրեզ փայլէւաններաց խետ թալիմ կանեմ։ Մէր շուրմ ձիմ՝ իտուր ինոր. ձիու խետն էլ պստիկ նետուանեղըմ լինան պստիկ գիւրզըմ, ասաց, կնա՝ ինչ կուզես արա։

Մսրայ Մէլիքի վազիր կուզպայտին Մէլիքի մախից վերչ լինոր կնկան էլ տիրեց, արաց ուր եար, ինոր խամար թակաւորութին ինչ կանդար որ կնկան ձեռն էր աման զըմէն իշխանութեն էն կուզպայտինի ձեռն էր, ինչ որ ուզէր՝ էն կանէր։

Եփ Մսրայ Մէլիքի տղէն յլմէն օր կէրթէր թալիմ կանէր. Դաւիթ աղաչեց ինոր որ զինէն էլ խետ տանի։

Մսրայ Մէլիքի տղէն ասաց թէհէ. դուռ պիտի թալիմ անես խետ ձիկ. ես որ թակաւուրու մը տղայ եմ. աման դու մէկ եթիմ ու փողնի տղայ ես, ինոր խամար չուզեց էն ուր խետ տանել։

Աման Դաւիթ ուր երեսի զօռով մէկ էլ որ կնաց թալիմի տեղ, կնաց մախսիւս նստաւ էն տեղ որ Մսրայ Մէլիքի գիւրզ կենէր։ Մսրայ Մէլիքի տղէն եփ զատանց տէսաւ որ մէկըմ նստե էն տեղ, խաղցուց, փղռեց, իմցաւ որ Դաւիթն ի էն նստող։

Մսրայ Մէլիքի տղէն եփ էս պան խասկցաւ, կատղաւ ու ասաց. Աղէկ ի որ զանեմ սատկցուցեմ զինք. աման նորէն ուր խօրխպոր խաթըր կանեմ, ինոր խամար ֆէրզ փայլէւանի մէկն օրօխկեց որ էն վեր խանի ուր տեղէն։ Աման Դաւիթ վեր չէլաւ. ապա ասաց. Թող Մսրայ Մէլիքի տղէն ուր գիւրզն իւրիշ տեղ թալի. ես ըստեղէն չեմ էլնի վեր։

Փայլէւան եփ դառցաւ Դաւիթի ասածն ինոր պատմեց՝ Մէլիքի տղէն սաստիկ սրտողէլով ասաց. Էհ. աղէկ ի որ ինք ուր ոտնով ինկաւ իմ թօռ. պէտք ի որ զանեմ, սատկցուցեմ ու մէկ դիր ազատուիմ ընորմից, որ չէլնի թէ վերչ փորձանքըմ դառնայ

իմ գլխուն։ Ասաց ու խէնձաւ ձին. մէկ սահաթուան ճանապահ զաստացաւ, ուր գիւրգն էթալ։

Դաւիթ տէսաւ որ էրկնուց կլոր պանըմ ուր գլխու վէրէն կ'էջնէ. շոտըմ ձեռն էրկնցուց, պռնեց էն գիւրզ, ու եթալ էաղէի վէրէն, էն կիրպով մէկ էանի աղէատ մներն աւերան։

Դաւիթ շոտըմ էլաւ կնաց ժօրն ասաց. Էսօր ես դաշտ նստեր ի, մէկ էլ տեսայ որ էրկնուց կլոր պանըմ կիջնէր. շոտըմ խաստայ պռնեցի էն կլոր պան ու թալեցի էաղէի վէրէն, քանիմը աներ էն ապուվ աւիրան ինոր խամար վախայ տուն։

Մէլիքի կնիկն ասաց. Տղայ, դու ո՞ր տեղն իր որ էդա պան արիր։

Դաւիթն ասաց. Ես նստեր ի էն տեղ որ քո լաճու թալած գիւրզ կիջնէր։

Դաւիթն ասաց ինոր. Մարէ, քո տղէն էջու էսա խորի մէջ, 40 խադ ըղդան կաշիով ծածկի, քաշի էն խորի պէնի վէրէն 40 ջաղցի քար. որ ես իմ դարպ զարկած ժամանակ ինոր ձևաս չի տամ։ Զիւնքի ես իրեք դեր իմ թուր պիտի զանեմ ինոր։ Մէրն էսա խօսքեր որ լսաւ, շատ ուրախացաւ, ուր լաճն էջուց ուր փորած խորի մէջ, 40 ըղդան կաշիով ծածկեց, էնոր պէնի վէրէն էլ 40 խադ ջաղցի քար էդիր։ Ասաց Դաւիթին, դէ արի, զարկ ես դարպ։ Դաւիթ կայնաւ խորի մօտ, իզարկ ուր առջի դարպն ու ասաց. Էսա մէկ դարպ Աստծուն խաթըր։ Մէկ էլ իզարկ, ասաց. Էս էլ քո ծծի կաթին ու ձեր տան մէջ կէրած խացիս խաթըր։ Մնաց մէկ դարպ, էն էլ պիտի զանեմ քո լաճուն։ Դաւիթ քաշից ուր թուրն կէծակին, ասաց.

Կիշամ խացն ու գինին, Տէր կենդանին,
Մարութայ պանձր Աստուածածին,
Էն խաչ պատրաստեն որ խաչուեր ի Դաւիթի աչ թիւին,
Պախապան կէնայ Դաւիթին,
Որ զանի թուրըն կէծակին,
Չէնի թէ ուր դարպն էրթայ քիւսն ու քամին։

Ասաց ու իզարկ ուր թուրըն կէծակին, զանելիւն պէս կտրեց էն 40 ջաղցի քարեր ու 40 ըղդան կաշիք, էջաւ չուր Մարայ Մէլիքի գլխու վէրէն. գայթեց կտրեց, խասաւ չուր էրկու ոդաց մէջտեղ, էրկու տապակ արաց, աման վէր ընոր իսկի խապար չէլաւ։

Մարայ Մէլիք խօրից պոռաց ու ասաց. Հէլէ էսա մէկ, ծնաց էրկու էլ, դէ քո դարպն արա երկու։

Չէ, ասաց Դաւիթ, կտրճի զարկած մէկ կէլնի, հէլէ դու քերէմ արա մէյ դիր քե իրար տուր։

Մսրայ Մէլիք եփ դիր ըմ ինքզինք իրար իտուր՝ էրաւ էրկու տապակ ու գէտին փուուաւ։ Դաւիթ շուտ ըմ խասաւ էն ջաղցի քարեր ինան ըղտան կաշիք վէրիւց, ու ընոր լէշ դիւս քաշեց։ Տարաւ մօրն ասաց ըսոր աչ կողմն իմ խօր կը խասնի, ձախ կողմն էլ կու տամ քե. դիւ ինչ կուզիս էն արա։ Էլ իւրիշ պան չեմ անի ձե, մէնակ թէ իմ խօր կապած վէրկիք կուզեմ ձեզնից։

Էն ժամանակ Թուղթ ըմ գրեց, իտուր քամուն, քամին էն Թուղթ տարաւ խասուց Ջէնով Օվանի ձեռ։ Եփ կարդացին իմացան ամէն պան. էլ ամեն քաղքցիք մէկ մարդու պէս ոտք էլան ու կնացին Դաւիթի դիմաց։

Դաւիթ եփ խասաւ, առին առօք, փառօք տարան քաղաք, հօթն օր հօթ կիշեր կէրան, խման, դօնամա արին։ Էն դիւց ետ պիրին Դաւիթին էլ պսակեցին խետ խուրնի խրիղէն աղջկան մը։ Ջաշեց ինն ամիս, չքաշեց, լաճ ըմ էլաւ լաճու տարին թամբաւ թէ չէ, տեսնող կասէր թէ էն իրիք տարեկան տղայ էր։

Զանփօլադ եփ լսաւ թէ Դաւիթ Մսրայ Մէլիքին սպաներ ի ու էս կերպով ուր պատիւն օրէօր կը պանցրանայ աշխըրի մէջ, օր ըմ չէ օր ըմ, կարելի ի որ ուրն էլ ջնաս ըմ տայ, Ախլաթէն էլաւ Թուղթ ըմ գրեց, իտուր քամուն, քամին էլ էն Թուղթ տարաւ խասուց Դաւիթի ձեռ։ Էն Թղթի մէջ գրուկ հր թէ պէտք է որ գաս խետ ձիկ կռիւ։ Դաւիթ եփ Թուղթ առեց, պատասխանեց թէ շատ աղէկ, պատրաստ կաց կո էկայ։ Դաւիթն էլաւ խէծաւ ուր քուռկու ճալալին. քշեց կնաց չուր Ախլաթ մէկ, էն տեղ Թուղթ ըմ օրօխկեց Զանփօլադին, ասաց թէ հոնչ կո էկիր եմ, էլի մէյդան։

Զանփօլատն էլ էլաւ խէծաւ ուր խրեղէն ձին. քշեց վէր Դաւիթին, իրեք օր իրեք կիշեր էն էրկուս կայնան մէմէկու խետ քիւշտի կպան։ Էն գիտէ որ Դաւիթ ձեռ կը թալէր դիխ Զանփօլադ, ուր ձեռքեր կը մտնէր մէջ ընոր մարմնուն. գիտես թէ խժորից շինսւած էլնէր էն։

Զանփօլադ նեղն ինելով ասաց Դաւիթին, էլ ես քիւշտի չեմ կպնի, պէտք ի որ գիւրզով կռուինք։ Շատ աղէք, ասաց Դաւիթ, դու քո գիւրզ գարկ, ես էլ իմ Թրով կը զանեմ, տեսնանք թէ Աստուած որուս կուտայ։

Զանփօլատն ասաց. Առաջ դու գարկ։ Չէ, ասաց Դաւիթ, պէտք ի որ առաջ դու զանես։ Եփ Զամփօլատ չընդունեց, էն ատեն Դաւիթ յիշեց ուր աղօթք ու քաշեց Թուրքն կէծակին ի գարկ Զանփօլատին, ինոր պայթեց, կդրեց, արաց էրկու կտոր։ Զանփօլատն ասաց. գարիճ, դարպդ արա էրկու։ Դաւիթն ասաց. Չէ, կտրճի դարպ մէկ կէլնի. հէլէ քէրեմ արա, մէյ դիր քե իրար

տուր։ Զանփոլատ եփ իրար դէպաւ, ուր գլխու կէս մէկ կողմ, կէսն էլ էն մէկէլ կողմն ինկաւ ու մեռաւ։

Առպար կնաց չուր Ախլաթ, ինոր խամար Ախլաթու ժողովուրդ շատ ուրախ էլաւ, ու էկան դիմաւորեցին Դաւիթին, առին տարան քաղաք թէ չէ, մէկ էլ էնտեղաց դէւերն էլան ինոր դէմ ու կռուան, չին թողնի որ էն մտնէր քաղաք։ Դաւիթ քաշեց ուր թուրըն կէծակին, ինկաւ մէջ էն դէւերաց, զըմէն էլ չարդեց ու քաղաքն էլ աւերեց։

Դարձաւ էն քաղքի ժողովուրդին քրիստոնութեն սորվեցուց. ժամ էլ շինեց ինոնց խամար, ուր խամարն էլ սարէ մը շինեց. էն տեղն արաց ուր խամար ամառանոց։ էն տեղէն էլաւ կնաց Սասուն. խասաւ քաղաք, չխասաւ ժողովուրդն ամէն էլան ինոր տիմաց. չուր իրեք տարեկան տղէրներն էլ էկան ինոր ձեռ պագեցին։ էն տղէրներաց մէջն էր Դաւիթի լաճ, որ խէր տեսնալով շատ ուրախ էլաւ ու ասաց. Ինչի՞ ձիկ էլ չտարար Զանփօլատի կռիւ։ կնացին քաղաք. շատ օրեր կէրան, խման, քէֆ արին. Դաւիթի լաճու անուն էլ դրին Պստիկ Մհէր։